ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ՝ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ·

ԹԻՒ Զ· ՏԱՐԻ ԺԵ· ՅՈՒՆԻՍ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԿՐՕՆԱԿԱՆ· Ազգային եկեղեցի եւ ազգային տօներ Ց· Վ· Մ· . 237

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Ողբերգութիւն Աբէլի· շարունակութիւն եւ վերջ Ս· Գնունի 248

Մատաղական կեանքի կենտրոնները. (Թարգմ·) Զ· Տ· Զաքարեանց 256

Մօր Արտասուք (բանաստ·) Թ· Պալեան 266

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Ագուլիսի հեղեղ· — Թղթակցութիւն Վանից· — Տեղեկագիր օրիորդ· Հոգ· դպրոցի Վաղարշապատու· — Ճառ հրաժեշտի խղիմաց ուսումնաւարտ ուսանողաց Գ· Ճեմարանի ի շիրիմ Երջանկայիշ· Գէորգ Դ-ի· Առաքել Վարդանեան· — Վերաշինութիւն եկեղեցւոյն Նոզմյոք քաղաքի եւ նուիրատուութիւնք ի նպաստ շինութեան 267

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ· 277

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ· (Սինոդի որոշողութիւններից քաղուածք·) Վարչական, Դատաստանական· 280

Մահագոյժ Սինոդի Անդամ Գրիգոր եպիսկոպոս Տ· Յովսէփեան

ՎԱ[illegible]

Ի ՏՊԱ[illegible]

"ԱՐԱՐԱՏ"

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է եւ սկսւում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում եւ Եւրոպայում՝ 5 ր. Հնդկաստանում 6. ր.

Ծրագիրն է.

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Արարատում կը հրատարակուեն նաեւ Վեհափառ Կաթուղիկոսի եւ Սինոդի կողմից եղած Վարչական այլ եւ այլ հրահանգութիւնները եւ Սինոդի օրագրութիւններից քաղուածներ:

Արարատում կը հրատարակուեն յիշատակարաններ՝ իբրեւ պատմական աղբիւր. կարտատպուեն լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները, զետեղելով ըստ բովանդակութեան:

Կը հրատարակուեն նաեւ լուրեր «Այլ եւ այլք» վերնագրով:

Հայաբնակ քաղաքներում եւ գաւառներում ստորագրուել ցանկացողները թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին. հասցէն Эчміадзинъ. Типогр. Комитетъ Տպարանական ժողովին:

Մամուլի [illegible] ու շուտով լոյս կը տեսնի ՄԻՆ-
վկայութեամբ հին եւ նոր
[illegible]



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Զ. — ՇՐՋԱՆ ԺԷ. **1884** ՏԱՐԻ ԺԷ. ՅՈՒՆԻՍ 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԵՐ.

—

Ի՞նչ է եկեղեցին. — Ի Քրիստոս հաւատացելոց ժողով. տեղ, ուր մարդիկ իրանց պաշտած կրօնին համեմատ՝ յայտնումեն իրանց սրտի սուրբ զգացմունքը։

Ամենայն կրօն իւր հիմնադիրն ունի և եկեղեցին հիմնադրի անուամբ կոչւումն։ Ամենայն մարդ և ամենայն ազգ ունին կրօն, բայց ինչպէս ամեն մարդ չէ կարող կրօնի վարդապետ լինել, այնպէս ևս ամենայն ազգ չէ կարող նոր կրօնի հիմնադիր առաջ բերել. միայն մի քանի ազգերի մէջ են երևացել կրօնի հիմնադիրներ, մնացեալ ազգերը հետևող են եղել թէ հիմնադրի սկզբունքներին, և թէ նոյն ազգի կրօնական պաշտամանց ծիսական մասին. բայց այդ հետևողների մէջ կան և այնպիսիք, որոնք թէև կրօնի հիմնադրի սկզբունքին են հետևում, սակայն

կրօնական պաշտաման ծիսական արարողութիւնները կատարումեն իրանց ազգային սովորութեանց համեմատ։

Աստուածամարդն Յիսուս Քրիստոս, երևալով հրէական ազգի մէջ, քրիստոնէական կրօնի ստեղծիչն եղաւ, և այդ կրօնի կենսատու սկզբունքի վերայ հիմնուեց ընդհանուր քրիստոնէական եկեղեցին։ Քրիստոնեայ ազգերից ոմանք ընդունեցին քրիստոնէութիւնը հետևելով ուրիշ ազգերի եկեղեցեաց ծիսական արարողութեանց և վարչական կազմակերպութեան. իսկ ոմանք կազմելով մասն ընդհանուր քրիստոնէական եկեղեցու, անվթար պահպանելով ընդհանուր առընչութիւն ի հաւատոյ՝ ծիսական արարողութիւնները կատարումեն իրանց ազգային սովորութեան համեմատ, իսկ վարչական կազմակերպութեան մէջ թագաւորողն է ազգի կամքը։ Այդ տեսակ ազգերի եկեղեցին կոչվումէ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ։

Հայաստանեայցս Ս. Եկեղեցին Ազգային Եկեղեցի է, որովհետև Աւետարանի, Սուրբ Գրքի սկզբունքի վերայ կառուցուած լինելով, և ուղղափառ Ս. Հարց և երեք տիեզերական ժողովների վարդապետութեան շաւղին անվթար հետևելով հանդերձ՝ ունի այնպիսի ինքնուրոյնութիւն, որ միայն Հայ պատմութեանն ու Հայ ազգին են յատկացեալ։ Ազգային եկեղեցիները այն առաւելութիւնն ունին, որ իրանց կազմակերպութեամբ պատկերացնումեն ազգի մտաւոր և հոգեկան կարողութիւնները նուիրագործուած պատմական անյեղլի և անփոխարինելի յիշատակաց առհաւատչեաներով, որ միայն ազգը կարող է առաջ բերել. և հոգւոյ փրկութեան խորհուրդները անթերի մատակարարելով հանդերձ, զուտ ազգային բնաւորութեամբ մարդուս սիրտն ու միտքը պարարումեն ազգի համար նուիրական յիշատակութիւններով։ Այդ տեսակ եկեղեցւոյ արարողութիւնները մարդուս վերայ ազդելով՝ սիրտը լցնումեն երանական յափշտակութեամբ, հոգին զմայլեցնումեն հաւատոյ և դաւանութեան խոստացեալ յաւիտենական երջանկութեամբ, իսկ մտքի թռիչքը ուղղումեն դէպի ազգի պատմական կեանքը, որի ծնունդն է ներկան։

Հայաստանեայցս Ս. Եկեղեցին Ազգային է, որովհետև նորա ծիսական մասն պատկերացնումէ ազգիս անցեալը, սովորութիւններն ու բնաւորութիւնը. նոյն ինքն մեր եկեղեցու Լուսաւորչական կոչուելը ցոյց է տալիս այն յատկորոշ առանձնութիւնը, որ

ռեպհական է միմիայն լուսաւորչական կոչվող Հայ Եկեղեցուն. այս՝ ըստ ծխական արարողութեան։

Հայաստանեայց սուրբ եկեղեցին ազգային է — որովհետև նորա վարչական կազմակերպութիւնն և ս ազգի կամաց արտայայտութիւնն է։ Ո՞վ է եկեղեցու երևելի գլուխը. — ազգից ընտրուած Հայրապետը։ Ո՞վ է եկեղեցու ամենաստորին պաշտօնեայն. — ժողովրդի հանրագրութեամբ եկեղեցու սպասաւորութեան նուիրուած ջահնկալը։ Արեմն, եկեղեցու ամբողջ վարչական կազմակերպութեան մէջ մենք տեսնումենք ազգի կամքը, որ խսկզբանէ անտի ներգործող լինելով՝ դարերի ընթացքում զանազան տխուր կամ մխիթարական դէպքերով նուիրագործուած՝ անյեղլի է այսօր։

Ի Տէր փոխուեց ազգիս Հայրապետը, ամբողջ ազգը ողբաց նորա մահը։ Հարկաւոր էր նորը՝ Հայրապետական գահը ժառանգելու. ամբողջ ազգը ձայն բարձրացրեց. քննեց, քննադատեց այն անձանց արժանիքը, որոնք հաւանական յաջորդներ կարող էին համդիսանալ այդ նուիրական Գահին. պատկառանքով յիշելով Հայրապետական իշխանութեան վերաբերեալ ազգիս համար նուիրական իրաւունքները, բուռն իղձ ունէր ընտրելագոյնին տեսնել յաջորդ հայրապետական Գահին և վարիչ Հայրապետական իրաւանց։

Թողնելով այն՝ ինչ որ ազգը խօսեց լրագրութեան միջոցաւ, (մենք լրագրութիւնը համարումենք ազգի ձայն), տեսնենք ազգի ջանքը Հայրապետի ընտրութեանը մասնակցելու գործում։ Հայրապետի ընտրութեանը մասնակցելու խնդիրն և ս բաւական խօսակցութեան առարկայ դարձաւ։

Գաւառները ոչ միայն Թեմական ընտրութեանց մասնակցելու իրանց պատգամաւորի ընտրութեան փոյթն ունէին, այլև յանձնարարումէին նոցա, որ խնդիր յարուցանեն իրանց ցանկացած ընտրելիների համար. և մարդիկ՝ ոչ եթէ խօյս էին տալիս, այլ պատիւ անձին էին համարում պատգամաւոր ընտրուել։ Գաւառական պատգամաւորների միջոցաւ ամբողջ Թեմի Հայ ժողովրդեան ցանկութիւնը արտայայտվումէր Թեմական ժողովում, իսկ Թեմական պատգամաւորին մնումէր Ս. Էջմիածնի Համազգային ժողովում Թարգման և հաւատարմատար հանդիսանալ իւր ընտրող Թեմի կամաց և ցանկութեան։ Ազգի կամքին հպատակումէին և՛ աշխարհական և՛ հոգևորական պատգամաւորները, որոնք

ամենայն անձնական նկատմունք մի կողմը թողնելով, աշխատումէին ազգի կամքը կատարած տեսնել: Բայց ո՞վ է Հայրապետը, որի ընտրութեան գործում ազգը այդպիսի եռանդ է ցոյց տալիս. — Դա է ազգային եկեղեցու երևելի հոգևոր գլուխը, Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների և Ս. Լուսաւորչի յաջորդը, Հայ Եկեղեցու աւանդապահը. այն ազգային եկեղեցու, որ դարաւոր վկայ է ազգիս փառացն ու նախկին շքեղութեանը, բարբարոսների աւերածութեանցն ու ազգիս թշուառութեանը. ազգիս, որ ընդունելով քրիստոնէական կրօնը, կազմեց յատկորոշ մի ազգային եկեղեցի, որ հոգւոյ անմահութիւն ու յաւիտենական կեանք քարոզելով, տանելով բոլոր արհաւիրքները պէտքէ ազգիս փառացն ու պատւոյն յաւիտենական վկայ մնայ: Ազգիս, որ եկեղեցու միջոցաւ անմահացաւ կամ եկեղեցու պարիսպների տակ առանց հայրենի երկրից հեռանալու՝ թափելով իւր արիւնը, և կամ գերութեան և հեռաւոր օտարութեան մէջ իւր հետ փոխադրելով եկեղեցին՝ նորա անմահ վարդապետութեամբ անխառն մնաց իւր շրջապատող ազգերից՝ և միշտ Հայ քրիստոնեայ մնաց — բացի նորանից, որոնք ուրանալով եկեղեցին՝ ուրացան և իրանց ազգը և կորան անհետ՝ խառնուելով իրանց շրջապատող ազգերին:

Այս փրկարար եկեղեցու հիմնադիրն է Յիսուս Քրիստոս, Հայաստանի մէջ հաստատողներն են Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները և վերահաստատողն են Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Տրդատ Թագաւոր, որոնք ոչ միայն մեր եկեղեցու անխոնջ մշակներն են, այլև մեր պատմութեան մէջ առաքինութեան, աշխարհաշինութեան և հանճարեղ մտքի հոյակապ տիպարները:

Այս անգամ պէտքէ ընթերցողներիս առաջարկեմ մեր ազգի քրիստոնէութիւն ընդունելու և մեր ազգային եկեղեցու սկզբնաւորութեան պատմութիւնը, որ քաջ իսկ պատկերացնումէ մեր եկեղեցու ազգային լինելու յատկութիւնն ու նշանակութիւնը:

Քրիստոսի Համբարձման և Ս. Հոգւոյ գալստեան տօներից յետոյ առաջին շաբաթը մեր Ազգի և Եկեղեցու համար խորհրդաւոր շաբաթ է: Այդ շաբաթի Երկուշաբթի օրը Եկեղեցին տօնումէ Ս. Հռիփսիմեանց նահատակութիւնը, Երեքշաբթի օրը՝ Գայիանեանց, Հինգշաբթի օրը՝ Ս. Յովհաննու Կարապետի և Աթանագինէ եպիս-

կոպոսի տօնը. Շաբաթ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Վիրապից դուրս գալու յիշատակը և Կիւրակէ օրը՝ Կաթուղիկէ Ս. Էջմիածնի տօնը։

Այդ տօները մեր ազգային կրօնական յեղափոխութեան դարագլուխն են և կռապաշտութեան ու քրիստոնէութեան մրցման ճգնաժամը, յաղթանակի փայլկեանը՝ երբ քրիստոնէական սիրոյ և խաղաղասիրութեան անձնազոհ մշակները թափելով իրանց արիւնը կրակապաշտութեան բորբոքուած բոցի վերայ հանգցրին, իրանց յօժարակամ մահուամբը յաղթանակելով կռապաշտութեան երկրպագու բանաւորութեանը։

Ո՞վքեր էին քրիստոնէական սիրոյ և խաղաղասիրութեան անձնազոհ մշակները։ — Ս. Գրիգոր՝ Անակի որդին, որ Տրդատի հետ Անահիտ չաստուածուհու արձանին երկրպագութիւն չանելու համար սոսկալի տանջանքներ կրելուց յետոյ, իբրև մահապարտ՝ Արտաշատու Խոր-վիրապը ընկաւ, ուր 14 տարի չարչարանք կեանք անցնելիս՝ Հայաստանը քրիստոնէական լուսով լուսաւորելու և ամենայն իրաւամբ ազգիս Լուսաւորիչ հանդիսանալու մեծ գործը ծրագրեց։

Ս. Հռիփսիմեանք, որոնք արևմուտքից արևելք — Հռոմից Հայաստան տարադէմ գալով՝ իրանց կանացի քնքոյշ խնամքով սերմանեցին Հայաստանի մէջ քրիստոնէութեան սերմերը, որոնք աճեցին ոռոգուելով նոցա արիւնով և Ս. Գրիգորի անխոնջ հոգացողութեամբ ու Տրդատայ աշխատութեամբ պտուղ տուին։

Քրիստոսի 300 թուին Հռոմում՝ կար մի կուսանաց վանք*), որի մայրապետն էր Ս. Գայիանէ։ Կոյսերի մէջ իւր գեղեցկութեամբ և իշխանական ծագմամբ երևելի էր Հռիփսիմէ անունով մի կոյս, որ թողնելով իւր իշխանական ճոխութիւններն ու աշխարհային վայելչութիւնները, մտել էր կուսանաց վանքը, օրինակ բարի հանդիսանալով իւր քրիստոնէական ամբիծ վարքովն ու առաքինութեամբ։

Հռոմայ Դիոկղետիանոս կայսրը տեսնելով Ս. Հռիփսիմէ կուսի հրաշալի գեղեցկութեամբ պատկերը՝ կամեցաւ ամուսնանալ նորա հետ, սակայն ս. կոյսը որ ուխտել էր կրօնի քարոզ լինել և ոչ արքունեաց զարդ՝ Ս. Գայիանէ կուսի առաջնորդութեամբ լաւ համարեց խոյս տալ Հռոմից՝ կայսեր ձեռքից ազատուելու հա-

(*) Չամչ. հատոր Ա. գիրք Բ. գլ. ԼԴ.

մար։ Ս. Գայիանէ և Հռիփսիմէ կոյսերին հետևեցին նոցա ընկերները և աստուածային խորհրդին նուիրուած քահանայք․ և այսպէս թուով մօտ եօթանասուն անձինք դէպի Ասիա ուղևորելով ցրուեցին զանազան կողմեր։ Ս. Գայիանէ և Հռիփսիմէ երեսուն և հինգ ընկերներով և երեք քահանաներով եկան Հայաստան և բնակուեցին Վասպուրական աշխարհի Վարագայ սարում, ուր Ս. Հռիփսիմէ թողնելով իւր խաչը, որ այժմ յայտնի է Վարագայ Ս. Խաչ անուամբ, ինքն և իւր ընկերները եկան Վաղարշապատ քաղաքը և բնակութիւն հաստատեցին Վաղարշապատի այգեստանների հնձաններում։

Դիոկղետիանոս կայսրը երբ որ իմացաւ Հռիփսիմէի և իւր ընկերների փախուստը, և դէպ ի Հայաստան ապաւինելը, թուղթ գրեց Հայոց Տրդատ թագաւորին, որ եթէ ինքն չի կամենալ ամուսնանալ Ս. Հռիփսիմէի հետ, թող յետ դարձնի Հռովմ ի կնութիւն կայսեր։

Տրդատի խնդրակները շուտով գտան Ս. Հռիփսիմէին Վաղարշապատի հնձաններում և իմաց տուին թագաւորին, որ լսելով Հռիփսիմէի գեղեցկութեան համբաւը, հրամայեց մեծ շքով բերել արքունիք։ Երբ որ սուրբ կոյսը մերժեց բոլոր հանդերձանքը և արքունիք գնալը, Տրդատ բարկացաւ և բռնութեամբ բերել տուեց, և երբ կամենումէր բռնութեամբ խոնարհեցնել իւր կամքին, Քրիստոսի շնորհքով զօրացած Ս. Հռիփսիմէից յաղթահարուեց, և ամօթով դուրս գնալով Ս. կուսի մօտից, հրամայեց կուսանաց մայրապետ Ս. Գայիանէին համոզել Հռիփսիմէին․ բայց Գայիանէ փոխանակ Տրդատի հարսնութեան համոզելու, ընդհակառակն համոզեց Հռիփսիմէին իւր կուսութեան ուխտից յետ չըկենալ․ և երբ որ երկրորդ անգամ Տրդատ փորձ փորձեց Ս. Հռիփսիմէին իւր կամքին և Հայաստանի թագուհութեան խոնարհեցնելու և յաղթահարուեց, սաստիկ բարկացած՝ հրամայեց սպանել։ Դահճապետը զինուորների հետ գտնելով Ս. Հռիփսիմէին՝ չարաչար տանջանքներով նահատակեց․ Հնձանում մնացած տկար կուսի հետ նահատակութեան պսակին արժանացան Ս. կուսի ընկերներից երեսուն երկու անձինք, որոնք շտապել էին նորա մարմինը ամփոփելու։ Իսկ Գայիանէ, որ երկու ընկերներով Ս. Հռիփսիմէին համոզելու համար եկել էր արքունիք և դեռ մրքունիքումն էր՝ Ս. Հռիփսիմէի նահատակութեան երկրորդ օրը

իւր ընկերների հետ սարսափելի տանջանքներով նահատակուեց։ Նահատակուած կոյսերի թիւը 37 է, իսկ նահատակութիւնը կատարուեց 301 թուին։

Ս. կոյսերին նահատակելուց յետոյ, մտատանջ Տրդատ մոլեգնութեան մէջ ընկաւ, և երևակայելով թէ ինքն խոզ է դարձել, հեռացաւ մարդաբնակ տեղերից։ Նոյն մոլեգնութեան ախտին ենթարկուեցին և շատերը իւր իշխաններից։

Աստուծոյ հրեշտակը տեսիլքի մէջ յայտնեց Տրդատի քրոջը Խոսրովիդխտին թէ Խոր-վիրապի մէջ կապեալ Գրիգորը միայն կարող է բժշկել Տրդատին և նորա հետ մոլեգնեալներին, Խոսրովիդուխտ պատմեց իւր տեսիլքը. ոչ ոք չըհաւատաց, այլ և լսողները ծաղրումէին՝ համարելով որ Գրիգոր այնքան երկար ժամանակ չէր կարող Վիրապի մէջ ապրել։ Տեսիլքը հինգ անգամ կրկնուեց, վերջապէս ստուգելու համար Օտայ նախարարին ուղարկեցին Արտաշատի Վիրապը ստուգելու։

Օտայ բազմաթիւ մարդկանց հետ Վիրապից հանեց Ս. Գրիգորին, որի մարմինը թխացել էր և իբրև ածուխ սևացել. որին, երբ Օտայի և ուրիշ բազմաթիւ մարդկանց հետ պէտքէ Վաղարշապատ մտնէր, ընդառաջ դուրս եկան մոլեգնեալ թագաւորը և ուրիշները, որոնց և աղօթքով բժշկեց։ Ս. Գրիգորի առաջին գործը եղաւ նահատակուած կոյսերի մարմինները իրանց պատառոտուն հանդերձներով պատատելով՝ ամփոփել նոյա նահատակուած տեղը, իսկ ինքն սկսեց քարոզել Աստուծոյ խօսքը, և պատուիրեց ապաշխարել հինգ օր ծոմ պահելով։ Իւր քարոզութեան վաթսուն և վեցերորդ օրը բոլորովին բժշկեց Տրդատին և նորա ձեռնտուութեամբ շինեց Ս. կոյսերի անուան յատկացեալ վկայարանները։ Ինքն Տրդատ անձամբ բրումէր կոյսերի հանգստեան տեղը, իսկ նորա կին Աշխէն տիկինն և քոյրն Խոսրովիդուխտ՝ փորուած հողը իրանց հանդերձներով դուրս էին թափում։

Երբ արդէն պատրաստ էին վկայարանները յանուն Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէի, և ի պատիւ տկար կուսին՝ կուսանաց բնակութեան հնձանում, Ս. Գրիգոր Տրդատի գործակցութեամբ կուսանաց մարմինները զետեղելով առանձին առանձին արկղի մէջ՝ ամփոփեց նոցա յատկացեալ վկայարաններում. իսկ այն տեղը, ուր Ս. Գրիգոր տեսիլքի մէջ տեսել էր Միածնի իջնելը Հայաստան աշխարհի կենտրոնը, քրիստոնէութեան լոյսը Հայաստանի չորս

կողմը ցոլացնելու, խաչ տնկել և որմով պատել տուեց, ժամանակին եկեղեցի շինելու համար։

Տրդատ բոլորովին առողջութիւն գտնելով քրիստոնէական լուսով լուսաւորուելուց յետոյ՝ Ս. Գրիգորի հետ շրջումէր Հայաստան աշխարհի ամենայն կողմերը, և կործանելով հեթանոսական բազմաստուածութեան մեհեաններն ու բագինները՝ կանգնացնումէր Քրիստոսի սուրբ Խաչը այն տեղ՝ ուր Ս. Գրիգոր քրիստոնէական հաւատոյ լոյսն էր ցոլացնում։

Ս. Գրիգոր Ս. Խաչի հաւատացելոց թիւը բազմապատկելուց յետոյ, առաջարկեց Տրդատին և Հայոց աշխարհի իշխաններին, մի հոգևոր հովիւ կարգել, որ հաւատացեալներին միշտ և քրիստոնէական եկեղեցու խորհուրդները մատակարարէ։ Տրդատի հրամանաւ ժողովուեցին կուսակալները, նախարարներն ու զօրքերի գլխաւորները, և միաբանութեամբ՝ Ս. Գրիգորին ընտրեցին իրանց հովուապետ։ Աստուծոյ տնօրէնութեան հպատակելով, Ս. Գրիգոր յանձն առաւ իրան առաջարկուած կոչումը, և Տրդատի հրամանաւ բազմաթիւ ընծաներով և ուղեկիցներով գնաց Կեսարիա տեղւոյն Ղևոնդ Հայրապետի մօտ, և Հայոց աշխարհի հովուապետ ձեռնադրուելով 302 թ. վերադարձաւ Հայաստան՝ հետն ունելով Անտոն և Կրօնիդէս կրօնաւորներին իրանց աշակերտներով, և իբրև պարգև Ղևոնդ հայրապետի, Յովհաննէս Մկրտչի և Աթանագինէ եպիսկոպոսի մասունքները։

Քահանայացնելու համար Սեբաստիայից աստուածպաշտութեան քրիստոնէական առաքինութեան մէջ վարժուած բազմաթիւ անձինք բերեց, ուրիշ քաղաքներից ևս բազմաթիւ եպիսկոպոսներ և վարդապետներ հրաւիրեց·

Ս. Գրիգոր այսպէս բազմաթիւ եկեղեցական պաշտօնեաներով և զօրքերով երբ հասաւ Տարօնոյ գաւառը, իմացաւ որ Իննակնեան կոչուած տեղը դեռ կանգուն կան Գիսանէ և Դեմետր կուռքերի արձանները· կամեցաւ կործանել, բայց հզօր ընդդիմութեան հանդիպեց· և արիւնահեղ պատերազմի մէջ Արձան քրմապետի ու նորա որդի Դիմետրի սպանուելուց յետոյ՝ կուռքերի տեղ կանգնացրեց Քրիստոսի խաչը· այնտեղ զետեղելով Յովհաննու Կարապետի մասունքից, յանուն Յովհաննու Կարապետի եկեղեցի շինեց և յանձնեց Անտոն և Կրօնիդէս և նոցա ընկեր կրօնաւորներին, որոնք չափազանց խստակրօնութեան համար կոչվումեն

խոստաճարակ. (որոց յիշատակը տօնումէ մեր եկեղեցին Նոյեմբեր ամսում)։ Այդ վանքը կոչւումէ Գլակայ վանք՝ Զենոբ Գլակի անունով, որ Գրիգոր Լուսաւորչի աշակերտներից էր և վանահայր վանքի. իսկ մեր ժողովուրդը Մշու Ս. Կարապետի վանք է անուանում, և խնդրակատար սուրբ համարելով՝ մեծ ջերմեռանդութեամբ ուխտ է գնում։

Աշտիշատում, ուր էին Վիշապաքաղն Վահագնի, Վահէվանեան, ոսկիահատ, ոսկեմօր Անահիտի և Աստղկան մեհեանները, Ս. Գրիգոր զետեղեց Ս. Յովհաննէս Կարապետի մասունքներից մի մասը, և նոյն անունով մի վանք շինեց։

Ս. Գրիգոր քարոզելով, մկրտելով ու եկեղեցիներ հաստատելով՝ հասաւ մինչև Բագրևանդ գաւառը, Տրդատը ընդառաջ դուրս եկաւ և Բագուանում ընդունեց նորան, որ ամսօրեայ ժամանակով իւր քարոզութիւնները շարունակելուց յետոյ, Եփրատ գետում մկրտեց Տրդատ Թագաւորին, նորա ընտանիքին և զօրքերին։ Տրդատի անունը մկրտութեան ժամանակ ի պատիւ Յովհաննու Կարապետի՝ փոխեց Յովհաննէս, և մկրտութեան տեղը զետեղելով Յովհաննու Կարապետի մասունքից՝ մի վանք շինեց, որ այժմ կոչւումէ Ուչ-Քիլիսէի—Երեք խորանեան վանք. և սահմանեց Յովհաննու Կարապետի և Աթանագինէ եպիսկոպոսի նշխարաց տօնը, որ տօնումենք Հռիփսիմեանց շաբաթի Հինգշաբթի օրը։

Ս. Գրիգոր վերադառնալով Վաղարշապատ քաղաքը, 303 թ. սկսեց շինել Էջմիածնի Տաճարը այն տեղը, ուր տեսլեան մէջ Միածնի իջնելը տեսնելով, խաչ կանգնելով շրջապատել էր։

Հայաստանեայցս Ս. Եկեղեցին ամենայն խրուամբ Զատկի, Համբարձման և Հոգեգալստեան տէրունական տօներից յետոյ տօնումէ իւր սկզբնաւորութեան տօնը. ի դէմս Ս. Հռիփսիմեանց, Ս. Գայիանեանց, Ս. Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի, Ս. Գրիգոր Լուսաւորչի ելանելոյն ի Վիրապէ և Ս. Էջմիածնի։ Այդ բոլորը տօնվումեն մի և նոյն շաբթում և յիշեցնումեն մեր պատմական կեանքի ամենամեծ յեղափոխութիւնը և ազգային եկեղեցու կազմակերպութիւնը։

Այդ տօների տպաւորութեան տակ մեր մտքի առաջ պատկերանումեն սուրբ Հռիփսիմէ և իւր ընկերները, որոնք սերմանելով

քրիստոնէութեան սերմերը Հայաստանի մէջ՝ աճեցնելու համար իրանց նահատակութեան արիւնով ոռոգեցին։ Պատկերանումէ մեր առաջ հսկայ և անպարտելի թագաւորն Տրդատ յաղթուած քրիստոնէական հաւատոյ զինուորի կանացի թոյլ լեզուով ու քնքքոյշ ձեռքով, և յուսահատութիւնից մոլեգնեալ՝ մի տկար կնոջից յաղթուած և ամօթահար լինելուն համար։ Պատկերանումէ մեր մտքի առաջ, ի շնորհս Խոսրովիդխտի, Ս. Գրիգորի Խորվիրապից դուրս գալը և Վաղարշապատի քաղաքադռներից դուրս մոլեգնեալ թագաւորի առողջութեան համար աղօթելն ու քրիստոնէական հաւատը քարոզելը։

Պատկերանումէ մեր առաջ այն մեծ ջանքը, որ գործ էին դնում թագաւորը, թագուհին, թագաւորի քոյրը, մեծամեծներն ու նախարարները Հայաստանեայցս եկեղեցին կազմելու՝ հետևելով իրանց հոգւոյ առաջնորդ առաքելանման Ս. Գրիգորին։

Պատկերանումէ մեր առաջ այն մեծ ժողովը որի համար թագաւոր և կուսակալ, նախարար և զօրագլուխ, ժողովուելով Վաղարշապատ մայրաքաղաքը, ընտրումեն Ս. Գրիգորին հովուապետ, որով սկիզբն են դնում Հայաստանեայցս եկեղեցու երևելի գլխի ընտրողական լինելու սկզբունքին։ Պատկերանումէ կռապաշտութեան վերջին ճիգը, Գիսանէ և Դեմետր կուռքերի քրմապետ Արձանի և նորա որդու Դեմետրի ճակատամարտը ընդդէմ քրիստոնէութեան առաքեալ Ս. Գրիգորի և նորա ուղեկիցների։

Մեր մտքի առաջ պատկերանումէ քրիստոնէական հաւատոյ վսեմութիւնն ու բարձրութիւնը, որի մօտ թագաւորն Տրդատ, իւր տիկինն Աշխէն և քոյրն Խոսրովիդուխտ նուաստացած՝ իրանց ինն օր յառաջ նահատակած կոյսերի մարմինները ամփոփելու համար անձամբ աշխատումեն գերեզման պեղելով և հողը իրանց հանդերձով դուրս կրելով։

Մեր մտքի առաջ պատկերանումէ Յիսուս Միածնի իջնելը Հայաստան աշխարհի կենտրոնը կռապաշտութեան խաւարը աստուածպաշտութեան լուսով փարատելու այն տեղից, ուր հաստատուելով հոյակապ կաթուղիկէն Վաղարշապատու, պէտք է հանդիսանար Աթոռ Ս. Լուսաւորչի Յաջորդի, և միութեան զօդ՝ ի սփիւռ աշխարհի տարագրուած հայերի, որոնք ի շնորհս կրօնի և կրօնական սրբութեանց — թէպէտ անձամբ տարանջատ սակայն լեզուով, որով և զգացմամբ մի, — պէտք է տանէին բարբարոս-

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԿԱՅԻՆ ԵՒ ՀՐԵՇՏԱԿ.

ԿԱՅԻՆ.

(Առանց Հրեշտակին տեսնելու) Ո՞ւր փախչեմ, ո՜վ սարսափելի ոճիր, հեռացէ՛ք դողդոջուն ոտներս, հեռացէ՛ք այս սոսկալի տեսարանից, (կրկին կամենումէ հեռանալ, Հրեշտակը արգելումէ)։

ՀՐԵՇՏԱԿ.

Ո՞ւր ես փախչում դահիճ. խիղճդ ու Աստուած դատախազ են քեզ, Աստուծուց փախչե՞լ ես կամենում, դարձիր կրկին դէպի Աստուած և պատասխան տուր, ո՞ւր է քո Աբէլ եղբայրը։

ԿԱՅԻՆ.

(Շվարած և կակազելով). Չըգիտեմ, միթէ թէ ես, Նորա պահապա՞նն եմ։

ՀՐԵՇՏԱԿ.

Չըգիտե՞ս, եղբօրդ արիւնը բողոքեց Ամենակալի աթոռի առաջ։ Անիծեա՜լ լինիս երկրի վերայ, որ ձեռքովդ եղբօրդ արիւն թափեցիր. աշխատես՝ բայց աշխատութեանդ պտուղը չուտես, քո բոլոր կենաց մէջ երերեալ տատանեալ լինիս։ Այսպէս վճռեց յաւիտենական անխաբ Դատաւորն. (աներևութանում է)։

ԿԱՅԻՆ.

(Սկսումէ սաստիկ դողալ). Ո՛հ ի՞նչ եղայ ես, ա՜յս ինչ անսովոր քրտինք ողողեց ինձ. դողումեմ, սիրտս տրոփումէ, կարծես թէ երկինք, գետին, մարդ և անասուն և նոյն իսկ իմ ստուերն ինձ հալածումեն. անիծեա՜լ բազուկ . . . անիծեա՜լ երագ, անիծեա՜լ հարուած . . . Ո՛հ, ահա եկան Ադամ ու Եւայ, ո՞ւր փախչեմ ես, ո՞ւր կորչեմ ես. (Հեռանումէ)։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱՅ.

ԵՒԱՅ.

Ո՜հ, ի՞նչ է այս, Աբէլն ինչ անսովոր կերպով փռուել է գետնի վերայ, ո՜հ . . . (ուշաթափվումէ)։

ԱԴԱՄ.

Վա՜յ ինձ, արիւն է հոսում ճակատից . . . (չոքումէ Աբէլի մօտ) որդեա՜կ իմ . . . Աբէլ. ի՞նչ է եղել, ա՜յս է մահը. սոսկալի՜ ժամ. (ուշաթափվումէ, Կայէն մնումէ)։

ԿԱՅԻՆ.

Ո՛հ, տակաւին Աբէլը չարթնե՞ց, անիծեա՜լ հարուած. չորանա՛ր բազուկս, ա՛խ դառն նախանձ. (հեռանումէ)։

ԱԴԱՄ.

(Ուշքի գալով) Կայի՛ն, ի՞նչ եղար, ո՞ւր գնացիր. աւա՜ղ Թշուառիս. Կայի՞ն սպանեց Աբէլին. Աբէլն սպանուա՞ծ է, ո՛հ, ո՞ւր եմ ես, երա՞զ արդեօք, վա՜յ և եղո՛ւկ ինձ. (ընկնումէ Աբէլի վերայ)։

ԵՒԱՅ.

Ուշքի գալով (վերցնումէ գլուխը). Ադա՜մ, Ադա՜մ, վե՛ր կաց, ձայն տուր Աբէլին, Աբէ՛լ, որդեա՜կ իմ, արթնի՛ր . . .

ԱԴԱՄ.

Ի՛նչ ցաւոց անդնդոց մէջ խորասուզուեցինք. երանի՜ թէ ծնած չըլինէի քեզ Կայի՛ն, ծնած օրդ խաւարէր. արև չըտեսնէիր.

(Հրեշտակը մտնումէ)։

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՀՐԵՇՏԱԿ,

ՀՐԵՇՏԱԿ.

Ինչո՞ւ էք լալիս անմխիթար. մի՛ սգաք, անմահ հոգիների և արդարների համար սուգ պէտք չէ. մահը ոչինչ չըկարողացաւ անել, այլ միայն քանդեց նորա մարմնեղէն բնակարանը, դուրս հանեց պայծառ հոգին, որպէս զի մեզ հետ Աստուծուն միշտ օրհնէ. դուք ևս հետզհետէ նորա մօտ պիտի գաք. Լսի՛ր, Ադամ, այսպէս է հրամայում յաւիտենական Բարութիւնը, հողը հող պէտք է դառնայ. (աներևութանում)։

ԱԴԱՄ.

Օրհնումեմ քեզ, երկնային բարեկամ, որ Աստուծոյ հրամանն մեզ յայտնումես. Աստուա՜ծ իմ, ո՛րքան մե՜ծ է Քո գթութիւնն ու անյիշաչարութիւնը, որ անպատում յուսով մխիթարումես մեզ . . . Առաջինն է այս, որ այսօր հողին պիտի յանձնուի ըստ Աստուածային վճռոյ ի հող դառնալու.

ԵՒԱՅ.

Ո՜վ մայրական գութ, աղիքներս կտրտուելով բերնիցս դուրս են Թափվում. (ուշաթափվումէ, Թիրզայ և Միհալայ մտնումեն)։

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԱՌԱՋԻՆՔ, ԹԻՐԶԱՅ ԵՒ ՄԻՀԱԼԱՅ.

ԹԻՐԶԱՅ.

Ո՛հ, ի՞նչ է այս Միհա՜լայ. ո՞վ է գետին փռուածը. ո՞ւր եմ ես, Աստուած իմ. ի՛նչ սոսկալի երազ, Աստուած իմ, ո՞վ է այս գետին

փռուածը, Աբէ՞լը, ի՛նչ է այդ, Հայր իմ. ո՞վ է դա, մայր իմ։ Աբէ՛լ, իմ ցանկալի՛ Աբէլ... Ո՜վ իմ երջանկութիւնս, ո՜վ իմ կեանքս, ո՜վ իմ լոյս ... ո՛հ, զարթնի՛ր, իմ սիրելի Աբէլ, իմ կենակից, լսի՛ր, Թիրզան է քեզ ձայնողը, զարթնի՛ր։ Աստուած իմ, դու զարթեցուր։

ՄԻՀԱԼԱՅ.

Աբէ՛լ, իմ սիրելի՛ Աբէլ, ո՜հ ...

ԱԴԱՄ.

(Լալով) Սթափուի՛ր Թիրզայ, սթափուի՛ր Միահալայ, անմահ հոգիների համար սուգ պէտք չէ։

ՄԻՀԱԼԱՅ.

Թո՛ղ որ լանք, Հա՛յր իմ. դու, ո՛վ մեր մխիթարութիւն և ցնծութիւն Աբէլ, ու՞ր գնացիր բաժանուեցիր, թողիր մեզ անմխիթար սուգի մէջ։ Մեր գործը պիտի լինի այսուհետև ողբալ անդադար։ Կային, ո՞ւր ես, արի՛ տես, քո հարազատդ ինչպէս անշնչացած է իբրև գառն։

ԵՒԱՅ.

Ով չարածնո՜ւնդ Կային. Աստուծոյ, հրեշտակների և մարդկան ատելի Կային. գօսանա՛ր բազուկդ։

ՄԻՀԱԼԱՅ.

Ո՛հ, ի՞նչ եմ լսում գազանային սիրտ, դաժան Կային, եղբայրասպան Կային։

ԹԻՐԶԱՅ.

(Գլուխ վերցնելով Աբէլի դիակի վրայից)։ Ո՛հ, անիծեա՛լ Կային, չորանային ձեռներդ։

ՄԻՀԱԼԱՅ.

Քո՛յր իմ Թիրզայ, մի՛ անիծեր, քո և իմ հարազատն է. աղօթենք նորա յանցանքի թողութեան համար. աղաչումեմ, մի՛ անիծեր, մեր անդրանիկ եղբայրն է, իմ փեսան է։

ԹԻՐԶԱՅ.

Ո՜ր յափշտակեց ինձ աղէտից դառնութիւնը, չեմ անիծեր իրան։ (Ընկնումէ Աբէլի վերայ գոչելով), Աբէլ, ի՞նչպէս քո ընկած ժամանակ մօտդ չըգտնուեցի, որ քաղցրիկ ձայնդ վերջին անգամն էլ լսէի և իմ հոգիս էլ քո հետ փչէի. վա՛յ ինձ, ինչո՞ւ կենդանի մնացի, կորցրի ամէն ունեցածս. ինձ այսուհետև ատելի են սոխակն ու վարդը, գառն և մաքին, լոյս և կեանք։ Աբէ՛լ, անտերունջ մատաղ գառներիդ բառաչումն իմ հոգիս պիտի քաղէ, սուրբ սեղանոյդ դատարկութիւնը իմ ցաւերս պիտի նորոգէ և բազմապատկէ, միշտ այս սոսկալի տեսարանս պիտի երևութանայ երևակայութեանս առաջ, միշտ պիտի տեսնեմ այս քաղց-

րաՀայեաց սիրակաԹ բիբերդ անշարժ և խաւարած. այս մաՀուան դեղնուԹիւնը բոլոր մարմինդ խնկոյ գոյն դարձրած. շուշանագեղ դէմքդ և Ճակատդ լերդացած արիւնով. նռնակեղև շրԹունքդ և գալարագեղ բազկունքդ Թարշամած և չորացած ինչպէս ծաղիկ՝ իւր ցօղունի վերայ խորշակից Թառամած։

ԱԴԱՄ.

Ո՛Հ, բաւական է Թի՛րզայ, լսի՛ր Հօրդ ձայնին։

ԹԻՐԶԱՅ.

Խաւարած աչքե՛րս, արտասուաց կաԹիլներ բղխեցէք սրտիս և սիրոյս բնակարանի քանդման վերայ։ Լուացէք այս չորացած և լերդացած արիւնը. ո՞ւր են այն քաղցրաՀայեաց բիբերդ, անուշակ ժպիտդ, սոխականման դայլայլիկդ. ո՞ւր են, ի՞նչ եղան, ո՞ւր Հեռացան. ո՜Հ, բղխեցէ՛ք արտասուքներս, բղխեցէ՛ք. այսուՀետև ինձ բաժին մնաց դառն սուգ, ողբ ու կոծ և արտասուք. (ողբում է)։

Վա՜յ, իմ կենաց քաղցրիկ ժամեր
Եւ ցնծուԹեանս պայծառ օրեր
Ի՛նչպէս շուտով անՀետացան
Ինձ Թողնելով այսպէս Թշուառ։

Սուգ դառնուԹեան վշտեր և ցաւ
Եւ արտասուք ողբ՝ կոծ անբաւ,
Յաջորդեցին անտէր Հիքոյս
Եւ խլեցին իմ ամեն յոյս։

ԵՒԱՅ.

Բաւական է Թի՛րզայ, ՄիՀա՜լայ. ձեր ողբ և կոծը Հոգիս քաղում են ձեր լացն ինձ յանդիմանուԹիւն է, որ պատուիրանազանցուԹեամբս մաՀ մտցրի աշխարՀ։

ՄԻՀԱԼԱՅ.

Մայր իմ, մեր ողբն ու կոծը յանդիմանուԹիւն մի՛ Համարիր, չենք կարող դէմ դնել բնուԹեան։

(Ենոք մտնումէ)։

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ԵՆՈՔ.

ԵՆՈՔ.

Մայր իմ ՄիՀալայ, Աբէլն ինչո՞ւ է ընկած արիւնաշաղախ. սոսկումեմ, ինչ կերպարանափոխուԹիւն. ինչո՞ւ էք լալիս. մա՛յրիկ, ինչ արիւն է որ Հոսումէ Աբէլի գլխից, միԹէ զոՀե՞լ էք և միԹէ գառներ չըկա՞յին զոՀուելու։

ՄԻՀԱԼԱՑ.

Որդեակ իմ, Աստուծոյ անարատ և ընտիր զոհ է եղել Աբէլ, բայց վա՜յ զոհողին . . .

ԵՆՈՔ.

Աբէլն այլ ևս չըպիտի՞ զարթնի. ո՞վ մեզ երգ պիտի սովրեցնէ, ո՞վ մեզ ծաղիկ և պտուղ պիտի բերէ. (լալիս է)։

ԱԴԱՄ.

(Թիրզայի թևը բռնելով քաշում է) Զարթի՛ր Թիրզայ, զարթի՛ր իմ սիրելի անզգայ տատրակ, պէտքէ Աստուծոյ հրամանը կատարենք, հո-ղին յանձնենք այս հողը, որ անմահ հոգւոյ բնակարան էր։

ԹԻՐԶԱՑ.

(Սթափուելով) Ի՛նչ մխիթարութեամբ լի մի թմրութիւն պատեց ինձ. Աբէլ երկնային պայծառութեամբ ինձ մօտենալով գրկեց և ասաց. Թիրզա՛յ, լաց մի՛ լինիր, ես երջանիկ եմ, և դու էլ ինձ մօտ պիտի գաս, որ իմիասին Աստուծոյ փառաբանութեան երգը երգենք։ Թո՛ղ հայր իմ, վերջին մխիթարութիւնս առնեմ, յաւիտենական քնոյ մէջ Աբէլի հետ Աստուծոյ փառաբանութեան երգն երգելու և ի միասին անպատում խնդութեամբ զուարճանալու։ Ուր Աբէլ, այնտեղ և Թիր-զայ, անբաժան Աստուծոյ արևը վայելեցին, անբաժան պէտք է շի-րիմ մտնեն հող դառնալու. (Աբէլի դիակի մօտ անշընչանում է)։

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱՑ.

(Թիրզային կամենում են զարթնացնել) Թի՛րզայ, Թի՛րզայ . . . ո՜հ, մի կորուստ և մի ցաւս երկու դարձան, վա՜յ ինձ։

ՄԻՀԱԼԱՑ

Վա՜յ, եղբա՜յր իմ, քո՜յր իմ.

(Վարագոյրը իջնում է)

Վերջ.

Ս. Գնունի։

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՕՆՆԵՐԸ.

ՓԱՐԷԶ.

(Շարունակութիւն տես Արարատ Բի- Ա.)

ԳԼՈՒԽ Բ.

Փարիզի բնակիչների ընդհանուր որոշիչ առանձնայատկութիւնը. — Փարէզը ինչպէս կենտրոն մտաւորական եւ հոգեկան կեանքի։ — Փարիզի մթնոլորտը։ — Փարիզուհին։ — Փարիզեցին։ — Ի՞նչ բան է (parvenus) պարվընու)։ Բեկլամ (ինքնագով յայտարարութիւն)։ — Ազնուապետութիւն — Նորա նշանակութիւնը անցեալում եւ ներկայումս։ — Բուրժուազիա (միջին դասակարգը հասարակութեան) — Բուրժուազիայի այժմեան դերը։ — Մշակ դասակարգը. — Քաղաքական կուսակցութիւնները։ — Փարիզի ուսանող երեխաները։ — Գաւառաբնակները։ — Օտարերկրացիները։*

Իւրաքանչիւր Գերմանացի յօժարութեամբ կասէ, թէ Գերմանիան աշխարհի մէջ ամենալաւագոյն երկիրն է, բայց հենց նոյն րոպէին բարեկամաբար կաւելացնէ, թէ Գերմանիային մի բան պակասումէ — Փարէզը։ Ֆրանսիացին էլ իւր հոգու գաղտնարանի մէջ հակառակ գաղափար ունի, թէ իւրաքանչիւր Ֆրանսիացու համար Ֆրանսիայում կայ մէկ բան աւելի — այսինքն է Փարէզը։ Եւ արդարև Փարէզը իւր չափազանց զարգացումով, իւր տիրապետող նշանակութեամբ, գաւառները կլանելու իւր ընդունակութեամբ — ուժասպառ է անում գաւառները և նորան կերպարանքից զրկում։ Յայտնի է, որ դեռ Ժիրոնդիստները**) գանգատումէին Փարիզից և նորա վերայ էին ձգում համարեա թէ հին կարգերի բոլոր յանցանքը։ Նոցա կարծիքով Փարէզը լափումէ Ֆրանսիային, այլանդակումէ, յետ է կասեցնում նորան, նա դէպի ինքն է ձգում ազգի կենդանի ուժերը և յաղթուած գաւառացու վերայ իւր կամքն է կապում, որ նսկապէս գործումէ միայն այն, ինչ որ ընդունումէ Փարիզից կարգադրած։ Այդ ի հարկէ ճշմարիտ է, բայց ա՞յն աստիճանի արդեօք և ա՞յն մտքով, ինչպէս հաստատումեն «աշխարհի մայրաքաղաքի» հակառակորդները։

(*) Պարվընու (parveuus) նշանակումէ այն անձը. որ ստոր վիճակից աւագութեան է բարձրացել։ Ծանօթ. Թարգմ.

(**) Ժիրոնդիստեանք, հռչակաւոր կուսակցութիւն ֆրանսիական առաջին յեղափոխութեան ժամանակ։ Նորա հիմնադիրն էր Բրիսսօ մէկ քանի ընկերներով, որոնք, ինչպէս եւ ինքը Բրիսսօ, պատկանումէին ազգային ժողովին։ Այդ կուսակցութեան անդամները համարեա թէ բոլորը նշանաւոր էին իւրեանց տաղանդներով եւ կրթութեամբ եւ մի եւ նոյն ժամանակ ջերմեռանդ պաշտպան էին ողջամիտ ազատութեան, բայց կատարելապէս հերքումէին ժողովրդի միջնորդութիւնը թագաւորական գործերի վերանորոգութեանց մէջ։ Վերջին ժամանակներում Բրիսսօյի համախոհները միացան Ժիրոնդեան դէպարտամենտի (նահանգի) պատգամաւորների հետ, որոնք ուղարկուած էին Օրէնսդրական ժողովը եւ նշանաւոր էին պերճախօ-

Գործը վերաբերումէ, ի հարկէ մտաւորական և հոգեկան կենտրոնացուցման։ Անհանգիստ լինել Փարիզի դէմ այժմեան երկրի դրութեամբ չի՞ նշանակիլ արդեօք զինուիլ Ֆրանսիայի մտաւորական կեանքի դէմ։ Գաւառը գանգատումէ թէ Ֆրանսիայի բոլոր նշանաւոր մարդիկ կենտրոնանումեն Փարիզի մէջ։ Բայց ի՞նչ պատճառաւ։ Այն պատճառաւ չէ՞ արդեօք, որ Փարիզումը իւրաքանչիւր հասկացող անձն գտնումէ իւր համար գործ, գնահատութիւն. որ Փարիզումը ոչ այնքան հարստութինը և պաշտօնական դրութինը, որքան խելքը և տաղանդը — դեր են խաղում և կառավարումեն աշխարհը։ Փարիզի այս կլանող ազդեցութինը, ոչ միայն Ֆրանսիայի այլ և մնացեալ Եւրոպայի վերայ կազմուել է ոչ արուեստական կերպով, այլ պատմական, ուրեմն նա պէտք է և կըմնայ այնքան՝ մինչև պատմական պատճառները կանհետանան։ Ինտելլիգենցիա խելք, գիտութին — դիմում հաւաքվումեն Փարիզի մէջ, և այս ոչ ոքի խորթ չի թվում, վասն զի Փարիզեան կեանքի այս աստիճանի պայմանները ունին համաշխարհային բնաւորութին, և Փարիզը այս աստիճանում երևումէ կենտրոն Եւրոպայի մտաւորական և հոգեկան կեանքի։ Անցէք Սենա գետի եզերքով, ֆրանսիական Ինստիտուտի շրջակաների — այն տեղով, ուր հին գրքերի գրավաճառներն են, ուր կան հին տպագրած գրքերի վաճառատուններ։ Ֆրանսիական ճեմարանի անդամի հետ, որ նոր է դուրս եկել արձանագրութեանց ճեմարանի ատեանից, դուք կըհանդիպէք հռչակաւոր գերմանացի կամ անգղիացի գիտականին. Բրէդա փողոցում, Պլիշա ծառաղարդ զբօսարանում, — այդ պատկերահանների թաղի մէջ — բնակումեն ամեն երկիրների և ազգերի պատկերահանները. իտալիացու հետ դուք կըհանդիպէք ամերիկացուն, իսպանիացու հետ — ռուս պատկերահանին, որ վերարնակել է այս տեղ, վասն զի «Փարէզը — Եւրոպայի և աշխարհի ճարտարութեանց շուկան է»։ Ճաշից չորս ժամ յետոյ ճեմեցէք լաւ եղանակներում Եղիսեան դաշտերում, գնացէք Բուլօնի անտառը և դուք կըզարմանաք, կափշիք այդ գաղ-

---

սութեամբ։ Այսպէս կազմուեց կուսակցութիւնը, որ սկզբում տիրումէր ժողովումը եւ յետոյ զարհուրեցնումէր Թագաւորին։ Ապա միացան Յակոբեաններին հետ եւ երկու կուսակցութեան գլուխն Դանտօնն էր. իսկ երբ սպանութիւնները, որոնց մէջ Ժիրոնդեաններից ոչ ոք մասնակից չեղաւ, խռովեցրին նոցա, — այն ժամանակ նոքա սկսան կռուել Յակոբեանների հետ։ Ժիրոնդեանների չափաւորութինը Լիւդովիկոս Թագաւորի դատի ժամանակ զինեց նոցա դէմ դիմաղօղներին (ազգային խռովութեան առաջնորդներ), որոնց գլխաւորն էր Մարաթ, եւ 2 Յունիսի 1793 Թ. քսան պատգամաւորներ, որոնք բռնել էին այդ կուսակցութեան կողմը՝ կալանաւորեցին, եւ նոցանից շատերը ինչպէս եւ Բրիսօ մահի մատնուեցին, իսկ մնացածները փախան Էրի եւ Կալվադօսի նահանգները, կազմեցին ապստամբութիւն, որ զարհուրելի եղաւ ազգային ժողովի նոր գլխաւորների համար. բայց սկզբում ցիր ու ցան եղան։ Նոցա զօրքը ջարդուեցին եւ համարեա թէ բոլոր մասնակիցները կալանաւորեցին եւ մեռան կախաղանի վերայ։ Ծանօթ. Թարգմ.

ղիական մայրաքաղաքի համաշխարհական բնաւորութեան վերայ (les rois en exil) արտաքսուած թագաւորներ, հինաւուրց պետական մարդիկ, և նախարարներ· Գերմանիայի, Անգլիայի, Իտալիայի, ամեն երկիրների հեղինակներ և խմբագրապետներ, բոլոր եւրոպական (beau—monde)—բարձր հասարակութիւնը պատահումեն միմեանց ամեն օր, և վերջ ի վերջոյ այնպէս ընտելանումեն, որ բնիկ Փարիզեցին — Բուրժուա (միջին դասակարգը բնակիչների) խոր համոզուած է, իբր աշխարհը Փարիզի մէջն է միայն։ Ի հարկէ, ֆրանսիական մայրաքաղաքը այսպիսի համաշխարհական նշանակութիւն կարողացել է ձեռք բերել միայն պատմական պատճառների հետևանքից Եւրոպայի վերայ Ֆրանսիայի նշանակութեամբ, Եւրոպական քաղաքակրթութեան համար Փարիզի պատմական նշանակութեամբ։

Բայց պատճառները չեն միայն Փարիզին կենտրոն շինողը Ֆրանսիայի և Եւրոպայի մտաւորական և հոգեկան կեանքի։ Պէտք է դոցա վերայ աւելացնել դարձեալ նոյն իսկ Փարիզի որոշիչ յատկութիւնները, նորա արտաքոյ կարգի ընկերսիրութիւնը, նորա չափազանց մարդաշահութիւնը, նորա սուր և ախորժ դատողութիւնը, նորա շարժականութիւնը ևս առաւել նորա նազելի թեթևամտութիւնը, որի մասին ծանրակշիռ Գերմանացիք խօսումեն այնպէս արհամարհանքով։ Փարիզեցու այդ յատկութիւնները շինումեն Փարիզին աշխարհումս եղած ամենաախորժ քաղաքներից մէկը։ Նորա մտաւորական և հասարակական մթնոլորտը, — ահա ինչն է կազմում նորա ամենից աւելի զմայլեցուցիչ կողմը։ Նորա ձգողական զօրութիւնը, նորա իսկական նշանակութիւնը։

«Ֆրանսիայումը, ասումէ Տէն, կան երկու զանազան ժողովուրդ՝ գաւառ և Փարէզ։ Գաւառաբնակները քնումեն, ուտումեն, յօրանջումեն, լռումեն· Փարիզեցիք մտածումեն, ապաւինումեն բախտի յաջողութեան վերայ, տքնումեն և խօսում։ Փարիզը առաջնորդումէ Ֆրանսիային, ուրեմն խօսելով Ֆրանսիայի մասին, կարելի է խօսել միայն Փարիզի վերայ։ Ներս մտնենք Փարէզ։ Ի՜նչ օտարոտի տեսարան է։ Ահա երեկոյ է, փողոցները լուսաւորուած են, փոշին ծածկումէ բազմահոգ ամբոխին, որ շտապումէ, նեղուածքից՝ գրթցումեն միմեանց, ճչումեն կաֆէների (սրճարան) և թատրոնների չորս կողմը։ Նկատեցէ՞ք դուք արդեօք այդ ամեն դէմքերը ի՜նչպէս դժգոյն են, ի՜նչպէս անհանգիստ են այդ հայեցուածքները, ի՜նչպէս ջղային են այդ կերպարանքները։ Պայծառ լոյսը ընկնումէ գլուխների վերայ, որոնք մեծ մասամբ դեռ 30 տարին չանցած ճաղատ են։ Այս տեղ բաւականութիւն գտնելու համար մարդ պէտք է գրգռուած լինի· ծառազարդ զբօսարանների փոշին նստումէ պաղպաղակի (мороженное) վերայ· գարշահոտութիւնը և արտաշնչութիւնները մայթի, ահա ի՜նչ են շնչում յօժարութեամբ և ուրախութեամբ։ Նոքա խմբվումեն բոլորակ փոքրիկ մար-

մարեայ սեղանիկների շուրջը, որոնք անհանգիստ են լինում պայծառլուսից, գարսօնների (երեխայ ծառայ) գոռգոռոցից, բազմաճիչ խօսակցութիւնից, տաղտկալի զբօսնողների միակերպ տեսարանից, գոգոթների (անպարկեշտ կանայք) գրթցելուց, որոնք անհանգիստ թափառումեն շուաքում։ Ի հարկէ նոցա տնային սարք ու կարգը զզուելի է· մենք բարձրանումենք չորրորդ յարկը, գտնումենք փայլուն սենեակներ քանդակագործութիւններով, գաճեայ արձաններով, նոր կաղնեայ կահկարասիք վառանների և յարկաւոր գզրոցների վերայ շատ խաղալիքներ։ Այսպիսի բնակարանում կարելի է ընդունել բարեկամներին և պատուելի անձինքների· բայց այս — յայտարարութիւն է (афиша) և ոչ աւելի· կէս ժամ կարելի է ժամանակ անցնել ախորժանօք, բայց ոչ աւելի։ Այսպիսի բնակարանը կարող է ժամանակաւորապէս ծառայել բնութեան համար, սենեակները ցած են, անյարմար են, նեղուածք են· բնակարանը վեց ամսից յետոյ արդէն ոչ մի բանի պէտք չէ։ Այդ մարդկանց բոլոր զուարճութիւնները խաբուսիկ են և իբր թէ հարևանցի ձեռք բերած· նոցա մէջ կայ մի ինչ որ հիւանդոտութիւն, գրգռիչ։ Այս զուարճութիւնները նման են Փարիզի ճաշարանների խոհանոցներին, սրճանոցների փայլին, Փարիզի թատրոնների ուրախութեանը։ Այս մարդիկը ցանկանումեն չափազանց սրընթաց, չափազանց գրգռիչ և չափազանց բազմաթիւ զուարճութիւններ։ Նոքա չափաւոր չեն շահվում նոյանով, կամենումեն միանգամից շահուիլ բոլորից· նոցա ամեն օր պէտք էնոր պաշար ծաղկազարդ ասացուածների, զուարճալի անցքերի, բազմատեսակ իդէաների։ Նոքա շուտով ձանձրանումեն և մի և նոյն ժամանակ ձանձրութիւնը անտանելի է նոցա։ Նոքա ամեն զօրութեամբ անձնատուր են լինում բաւականութեանց և այնու ամենայնիւ ձանձրութիւն են զգում։ Նոքա մեծացնումեն իրանց աշխատութիւնը և ծախսերը, կարիքները և ճգունքը։ Զգացմունքների յորդութիւնը և խոնջութիւնը հասցնումեն նոցա գործարանը ամենալարուած դրութեան· իսկ ուրախութեան փայլը օրը քանի անգամ ճայթվումէ և երևան է հանում չարչարանքների և ցանկութիւնների մեծ մասը։ Բայց դորա փոխարէն նոքա ի՜նչպէս սրամիտ են, ի՜նչպէս ազատ է նոցա խելքը։ Ի՛նչպէս նոցա ազդել է այդ մշտական իրարանցումը։ Ի՛նչպէս նոքա բոլորը արագութեամբ ըմբռնումեն և ամեն բան հասկանում։ Ի՛նչպէս այդ բազմատեսակ և փորձառական կրթութիւնը նոցա ընդունակ է դարձրել զգալու և հասկանալու բարոյական աշխարհի կողմերը, որոնք կատարելապէս անյայտ էին նոցա նախորդներին, — խորին, կաթոգին և վսեմ զգացմունքը, որոնք այնպէս խորթ են թվում գաղղիական ազգին։

Այս ահագին քաղաքը բոլոր աշխարհի քաղաք է· ամեն իդէաներ կարող են նորա մէջ սկիզբն առնել, ոչ մի բարբարոսութիւն արգելք չի լինում հանճարներին, մտաւոր անվախճան, անհարթ և առանց

որ և իցէ սահմանեալ ճանապարհի դաշտ է բացվում նորա առաջ։ Գործնական կեանքը խոչընդոտ չի լինում և չի ուղղում նորա։ Աշխարհը այստեղ երևումէ թատրոնական դրամարկղ, նիւթ կրիտիկայի և դատողութիւնների համար, և հաւատացած կացէք, որ կրիտիկան և դատողութիւնները այս տեղ խաղումեն իրանց մշտական դերը։ Անգլիացին մտնելով կեանքի մէջ՝ մարդկութեան ամենամեծ խնդիրների վերաբերութեամբ գտնումէ պատրաստ պատասխաններ։ Իսկ ֆրանսիացին մտնելով կեանքի մէջ՝ ամեն տեղ տեսնումէ միայն երկբայութիւններ և ենթադրութիւններ։ Նորան հարկաւոր է այս դատողութեանց զանգուածի մէջ ինքնիրան ձեռք բերել իւր համար համոզմունքներ, իսկ որովհետև ըստ մեծի մասին նա չի կարող այդ անել, ուստի բնական է, որ նորա խելքը բաց է բոլոր երկբայութիւնների համար, իսկ հետաքրքրութիւնը և նորանոր ճշմարտութիւնների ծանօթութիւնը վրդովումէ նորան։ Այս դատարկութեան մէջ, որ նման է անսահման ծովի, — ցնորքները, տեսական գիտութիւնները, այլանդակ կարծիքները, անկարգ ձգտմունքները, բանաստեղծականներ և հիւանդոտութիւններ հաւաքվումեն և մերժումեն միմեանց։ Եթէ այս շարժուն ընդհարման ձևերի մէջ կամենաք հաստատուն գործ գտնել, որ հիմն է կազմում ապագայ տեսութիւնների և աշխարհահայեցողութեան, այն ժամանակ գիտութիւնից աւելի յարմարաքայլ կընթանաք, մերթ այս տեղ, մերթ այն տեղ ծովի պոլիպոդների նման, որ հիմն է դնում միկրօսկոպիքական մասունքներից, որի վերայ կամրապնդուի մարդկային ազգի հաւատը։

Օտարերկրացու և ճանապարհորդի ուշադրութիւնը ամենից առաջ, ի հարկէ յափշտակվումէ արտաքին կամ այն բնակիչների դասակարգից, որ ամենից աւելի կայ ի նկատի, որը եթէ չէ կազմում քաղաքի բնաւորութեան առանձնայատկութիւնը, գոնէ ամենայն դէպքում երևումէ ամենից աւելի փայլուն նորա երևացող կողմը։ Փարիզի բնակչաց մէջ այս տեսակ դասակարգն է «հասարակութիւնը» — la societé — այսինքն հարուստ մարդիկ, երևելիները, ամեն դասից։ Կարոլոս Ե. Կայսրը 1539 թ. ասաց Ֆրանսիայի մայրաքաղաքի մասին. «Փարէզը ձիանոց համար — դժոխք է, տղամարդկանց համար — քաւարան, կանանց համար — դրախտ»։ Եւ այս խօսքերը նոյնպէս ճշմարիտ է ներկայ ժամանակում, ինչպէս որ ճշմարիտ էր 400 տարի սորանից առաջ։ Կինարմատը Փարիզի մէջ թագուհի է, նա ունի իւր արքունիքը, իւր պալատականները, իւր ճակատագիրը. նորան երկրպագումեն և շողոքորթում. հիւրերի ընդունարանում նա եղանակ է տալիս խօսակցութեան, նորա շուրջը խմբվումեն պատգամաւորներ և նախարարներ, գիտնականներ և հեղինակներ. նա մտնումէ գրականութեան, նորաձևութեան և շատ անգամ քաղաքականութեան շրջանի մէջ, ոչ միայն ներքին, այլ և միջազգային քաղաքականութեան մէջ վերջինը

չէ։ Տիկին դէ—Սեվինիէ Լիւդովիկոս ԺԴ ի թագաւորութեան ժամանակ, տիկին Ռօզալի յեղափոխութեան ժամանակամիջոցում, տիկին Ստալ՝Նապօլէօն Ա. ի, տիկին Ռեկամիէ Րէստավրիացիայի ժամանակ *), տիկիններ դե-Ժիրարդէն և Ժօրժ-Զանդ Ցուլիսեան իշխանութեան ժամանակ, և վերջապէս մեր ժամանակում տիկին Ադան, չափազանց յայտնի են իրանց ազդեցութեամբ և հանճարով։ Միայն Փարէզը կարողացաւ ստեղծել այսպիսի կանայք. միայն Փարիզում կարողացան գտնել իրական մթնոլորտը և յարմար հող կեանքի և զարգացման համար։ Բայց նոքա — բացառութիւն են, շնորհալի հրէշածին են, և նոցանով ի հարկէ չէ կարելի կազմել իրական և ճշգրիտ հասկացողութիւն Փարիզուհու տիպի մասին։ Իմանալու համար՝ թէ ի՞նչ է Փարիզուհին, պէտք է Փարիզումը ապրել և կնոջը զննել ամեն պայմանի և դասի մէջ։ Միայն Փարիզեան կրթութիւնը ընդունակ է ստեղծելու այն օտարոտի էակը, որ Փարիզուհի է կոչվում։ Մտէք որ վաճառատուն կամենաք, դէպի ձեզ կըդառնայ գործակատար կինը։ Նորա ընթացքը այնպէս անպարսաւ է—ինչպէս և վարմունքը իսկական grande dame—բամբիշի. նա շարժվում է հեզաքայլ և գրաւիչ. նորա մետաքսեայ հանդերձը խշխշում է ամենանազելի կերպով։ Այնքան ապրանքների անուն կըտան, այնքան ապրանքների տեսակը ցոյց կըտան ձեզ, որ դուք կըշըշկլէք։ Եթէ ամօթու շառագունէք, և դժուարանաք ընտրել, ձեզ կառաջարկեն աթոռ—քաղցր ժպիտով։ Փարիզի վաճառատան փարիզուհի գործակատարի մէջ չըկայ ամաչկոտութիւն (բայց ոչ անամօթութիւն), ախորժ ձայն, նուրբ ժպիտ, հաճոյականութիւն, միտքը ըմբռնելու զարմանալի ընդունակութիւն, և վայելուչ շարժուածք, — ահա նորա յատկութիւնը։ Եւ այս ամեն շրջահայեաց զգուշութիւնը լաւ գնով ապրանք վաճառելու համար չէ, այս բոլորը նորա համար չեն անում, որպէս զի հրապուրեն գնողներին. այս բնական, կանոնաւոր յատկութիւնն է Փարիզուհու. նա հաճոյանալով, հաճոյական կերպով հագնվելով և գլխի մազերը շքեղ սանտրելով բաւականութիւն է զգում։ Նա փոքր ինչ դժգոյն է, վասն զի չափազանց երկար միջոց նստում է սենեակում, սաստիկ շողշողուն գազի առջևը, և նորան պէտք է պուտրա (սպիտակ փոշի մազերին և երեսին ցանելու), որով նմանում է աշխարհավար տիկնոջ։ Մէկը միւսին կարժէ, որովհետև նոյն ընթացքը և նոյն յատկութիւնը երկուսն էլ ունին։ Եւ իւրաքանչիւր Փարիզուհին այդ շատ լաւ գիտէ, Փարիզումը սենեկապան աղախինը իւր անձը ոչ մի բանով պակաս չի համարում իւր տիկնոջից։ Պարզութիւն և ճշտութիւն մտաց,

(*) Րէստավրացիա Լատ. այն թագաւորները, որոնք մեծին Նապոլէօնի ժամանակ իրանց գահից զրկուած էին և վերստին հաստատուեցին իրանց օրինաւոր աթոռի վերայ։ Այս թագաւորութիւնների վերականգնումը կոչվում է Րէստավրացիա։
Ծանօթ. թարգմ.

զարմանալի կառավարչական յատկութիւններ, իսկ կարօտութեան ժամանակ—հաստատութիւն և վստահութիւն.—ահա որոշիչ յատկութիւնները Փարիզուհու: Ուշադրութեամբ զննեցէք որ և իցէ (dame de comptoir) գրասենեակում պարապող կնոջ: Մինչև կէս գիշեր նա նստած է որ և իցէ սրճարանի ըմպանակների, շիշերի մէջ՝ ծախսը և մուտքը գրելով. նորա ոտների տակը կայ շօֆրէտկա (ջեռուցիչ *) և այսպէս 15 ժամ անընդհատ տեղից չի շարժում: Նա հսկում է ամեն բանի, հասարակութեան, անօթների, վաճառողների, սպիտակ հացի, գործակատարների, երեխաների ու աղախինների վերայ, և այսպէս է նա երկուշաբթի առաւօտից մինչև շաբաթ երեկոյ. Նորա հրամանները ճիշտ են և հաշուեմատեանները ուղիղ: Նորան լսում են, վասն զի նա լաւ հրամանատար է, շատ անգամ գերազանց իւր մեծաւորից: Տղամարդը շատ անգամ մտնվում է բազմատեսակ տպաւորութիւնների. յանդիմանութիւն ստանալով նա կորցնում է ուշադրութեան զգուշութիւնը. եթէ հակառակորդը խորամանկութիւն է անում, ձևանում է բարի մարդ, պարզ և մտերիմ, — այն ժամանակ նա հպատակվում է և շտապում անօգուտ սակարկութիւն անել: Բայց կինը մտնով նշան է տալիս. այրը հասկանում է, դադարում է և յետաձգում գործի վճիռը «մինչև վաղը». մտածում է ինքնիրան՝ «ես դեռ միջոց կունենամ խօսել կնոջս հետ»: Գիշերը նորա հետ խստութեամբ են վարվում և նա յառաջ կընտրայ բոլորովին երկմտութեամբ սպառազինուած: Շատ անգամ կինը ինքը խառնվում է գործի մէջ, մինչև անգամ չըդիմելով տղամարդի խորհրդին. նա ինքը մտնում է վէճի մէջ և ամբողջ ժամեր պատրաստ է պաշտպանել իւր շահերը: Երբ խնդիրը վերաբերում է գործին, այն ժամանակ նորա վերայ խօսակցութեան ձևերը և նախադասութիւնները չեն ազդում. նորա մտքերը — ինչպէս գնդասեղներ ցցուած ուղեղի մէջ՝ չեն ցած թափիլ այնտեղից, որպէս զի ուղեղը գնդասեղներից ազատուի, հարկաւոր է բոլոր մեքենան նորոգ շինել. — ահա ինչ պատճառաւ Փարիզուհին իւր բոլոր մտաւորական յատկութիւններով ընդունակ չէ տրամաբանելու: Փարիզի մէջ դուք շատ անգամ կըհանդիպէք կանանց, որոնք իւրեանց տղամարդներին հասարակ գործակատարներ են շինում, որով առուտուրը աւելի է ծաղկում, տղամարդը կատարում է հասարակ գործեր, այսինքն փակում է բեռներով արկղներ ուղարկելու համար. կատարում է յանձնարարութիւններ, պատուիրում է երևելի գնողներին: Իսկ կինը բոլոր գործերին վերահասութիւն է գործում. կառավարում է գործարանը, վճռում է, թէ որ ապրանքը աւելի լաւ յառաջ կերթայ, որը հարկաւոր կըլինի վնասով վաճառել: Զորօրինակ կօճակների առուտրում, նա ունի այնքան խելք,

---

(*) Շօֆրէտկա (ջեռուցիչ) է կոչվում այն շիշը, որ տաքացրած ջրով դնում են ոտների տակ ձմեռվայ եղանակին տաքանալու համար: Ծանօթ. Թարգմ.

որ կարող է հնարել նորաձև կօճակ աժան գնով։ Ահա ինչու համար շատ հետախոյզներ կարծումեն, թէ Փարիզուհու նշանակութիւնն է— լինել գործակատար dame de comptoir, *ի հարկէ լաւ կաֆէ—ճաշարանում։ Այստեղ նա բոլորովին իւր տեղումն է, լաւ հագնուած է, պարապած ժպիտներով և առուտրով, կիսավայելուչ, կիսահրաւէր կերպարանքով, քաղցր է և ուշադիր դէպի ամենքը գահլիճում, որը միևնոյն ժամանակ և պանդոկ է և հիւրանոց։*

Այս աւելի ևս կըպարզուի եթէ միտք բերենք ուրիշ երկրների կաֆէ—ճաշարանները, Փարիզեան սրճարանը շքեղազարդ կերպով նկարումէ իսկական Փարիզեցի (pur sang) *ազնուարիւն երկու սեռերին, և նոցա բնազդումներն ու սովորութիւնները։ Վեր առէք բաղդատելու համար որ և իցէ* Bier—Halle *Գերմանիայում։ Ամէնքը գնումեն այն տեղ. ի՞նչ օտարոտի տեղ է զուարճութեան համար։ Դուք հանդիպումէք ամէն դասակարգի մարդկանց բազմութեան սիւրթուկներով, բլուզներով, գազի պայծառ լոյսի առաջ, թամբաքուի ծուխի մէջ,—բոլորը գոռգոռումեն, գարեջուր են խմում, ծիծաղում են։ Եւ նոցա համար այդ լաւ է, այդ ծանր օդը թվումէ նոցա բնութեանը յարմար։ Նոցա զուարճութիւնը կայանումէ հանգստութեան մէջ, նոքա անդորրութեամբ ծխումեն և անդորրութեամբ զատողութիւն են անում։ Հատերի դէմքը յիրաւի տխուր է, յառաջ քան պատասխան տալը նոքա ամբողջ քառորդ ժամ մտածումեն։ Երևումէ, որ ներքին ժամացոյցը յուշիկ է շարժում, յուշիկ է հանդիպում մէկ անիւը միւսին, մինչ որ հնչի ժամը։ Իսկ այդ տեղի թագուհիները ի՞նչպէս զանազանվումեն Փարիզուհիներից։ Դուք տեսնումէք երկու կին՝ դուստր և մայր։ Դուստրը կայտառ մանկահասակ աղջիկ է. նա մտիկ է անում ուղղակի ձեր աչքերի մէջ և մտածումէ միայն իւր գարեջրի համար։ Մայրը պարարտ և հանդարտ կին է, նա յղի է և ծնելու վերջին ամիսներումն է, բայց առանց քաշուելու սպասաւորումէ և հոգս է անում սեղանների մօտ։ Նկարագրեցէք ձեզ կծու խօսքերը և անամօթ յարձակմունքը այցելուների, եթէ այդ այցելուները Փարիզեցի լինէին։ Բայց այդ չըկայ. վերին սենեակում քանի մի երիտասարդ տղամարդ կան—գործակատարներ, հոգևոր անձներ, ուսանողներ—որոնք նստելով բոլորակ սեղանի հուրջը՝ մէկ կողմ թողնելով ծխարանները (չիբուխ* трубка)*, ամէն մէկը հանումէ իւր գրպանից ձայնագրութիւնը* (ноты)*։ Նա՝ որ կենտրոնումն է, նշան է տալիս և ամէնքը սկսումեն երգել հանդիսաւոր և բարձր եղանակով հոգևոր երգ* (хороль) *Սեբաստիանու—Բախի։ Երկու կինն էլ ծածուկ սրբումեն գոգնոցներով իրանց արտասուքը։ Աշխարհավար կին* (свѣтская женщина)*, անպարկեշտ կին* (кокотка)*, գործակատարուհի վաճառատան մէջ,—ահա երեք նշանակութիւնը Փարիզուհու։ Այս տեղ նոքա կատարեալ են և չունին մրցողներ։ Այդ բոլորը ի հարկէ կախումն ունի բնաւորութեան խառնուածքից։ Մոռացէք փոքր մի-*

ջոց նորա մազերի շքեղ սանտրելը և զարդարանքը, տեղը, որ ունի հասարակութեան մէջ,—մոռացէք բոլոր արտաքինը և վերացննեցէք հանգամանքը, որ կայ նորա բնաւորութեան մէջ։ Փարիզուհու ներքին գոյութիւնը—այդ gamin է (փողոցային երեխայ) յաջողակ, համարձակ, խելօք, որին փոփոխելը անհնար է, որի մէջ պակասում է յարգութիւնը դէպի մարդկային անձնաւորութիւնը և որը իւր անձը համարում է հաւասար ամենին։ Մենք կարծումենք, հիմնելով արտաքինի վերայ, թէ դաստիարակութիւնը պատուաստում է Փարիզուհու վերայ պարկեշտութիւն,—այս սխալ է. նա ընդունում է 'միայն' պարկեշտութեան արտաքին գծագրութիւնը, որը անհետանում է ամուսնութեան և հասարակութեան մէջ երեք ամիս կեանք քաշելուց յետոյ։ Իդէանները նորա ուղեղի մէջ երևումեն չափազանց արագ և չափազանց պարզ,—կամքը ներգործում է նոյնժամայն։ Նորա գոյութեան պայմանը անկախութիւնն է, ստորադրելութիւնը խեղդում է նորան։

Հասկանալի է, թէ ինչ պատճառաւ հարստացած օտարերկրացիք գալիս են Փարէզ կեանք վարելու, «բաւականութեան ծաղիկներ քաղելու», Փարիզուհին կարող է շարժել նոցա բթացած ջղերը, դորա համար նա իշխում է երկու տաղանդի։ Առաջին տաղանդն պարունակվում է խօսելու ճարտարութեան մէջ և թոյլատրել խօսել երկսայրաբանութիւններ։ Յայտնի է, թէ որքան այր մարդը աւելի ծանրաբարոյ է, նոյնքան աւելի յաջողութիւն կայ գտնելու նորանում կատարեալ gamin ; երբեմն չափազանց աստիճանի խեռի և անամօթի։ Ահա այս իսկ gamin ին որոնում է նորա մէջ կուրտիզանկան (հեշտասէր կինը)։ Նկարագրեցէք ձեր մէջ, թէ ի՞նչպէս լաւ է նորան լինել ազատութեան մէջ. ի՞նչ ուրախութեամբ նա թռչկոտում է գորգի վերայ, ևս առաւել եթէ գորգը շքեղ է, կահկարասիքը գեղեցիկ են, տանտիկինը դէմքով սիրուն է, և միշտ զուգուած զարդարուած ինչպէս աշխարհավար կին... Երկրորդ տաղանդը աւելի վսեմ է.—Փարիզուհին անձնաւորութիւն է, և ոչ իր. նա գիտէ խօսել, ցանկալ, քնթից բռնած մանածել. նա ունի իւր ցանկութիւնները, կամակորութիւնը, ինքնահաճութիւնները,—որ աստիճանի խայտառակուած լինի, այնուամենայնիւ մարդ է։ Մէկ ինչ որ գերասանուհի անցեալ դարում իւր սիրահար դուքսից քարշեց խլեց Սուրբ Հոգու շքանշանը, գոռալով նորա վերայ. «Խոնարհիր ծնկներիդ վերայ և համբուրի՛ր իմ հողաթափս, ո՛վ ծեր դև»։ Վաղուց չէ, որ մէկ գոգօթ (անպարկեշտ կին) խնդրումէր իւր սիրականից ընծայել նորան մէկ տուն. երեք օրից յետոյ սիրականը բերում է նորան մէկ տրցակ (կապոց пачка) թղթադրամներ։ Նա ընդունում է դրամները և շպրտում է նորա երեսին ասելով. «Ծե՛ր անձնապաշտ, ես խնդրեցի քեզանից ոչ թէ դրամ, այլ տուն, դու չըհամեցար անձիդ նեղութիւն տալ գնել տունը»։ Ասումեն, որ սիրեկանը այդ արարմունքը գտել է շատ գրաւիչ. նա չի ընտելացել կանացի անկա-

խուլթեան հետ։ Այս տեսակ կարգից դուրս բաների ընդունակ են միայն Փարիզուհիները։ Լոնդոնում կանայք (Cremoris gordens) — յիրաւի անմիտ են, որոնք դառում գոչումեն կամ մարմաջում, կամ թէ տխուր գործակատարներ են՝ զբաղուած հաշիւներով։ Փոքրիկ տնակների մէջ, արուարձաններում դուք կըպատահէք շատ գեղեցիկ, վայելուչ աղջիկների, համարեա թէ լէդի (անգղ. տիկին), որոնք ցանկանումեն միայն կանոնաւոր կեանք և ընտանեկան ուրախութիւններ, մնացածները յուսահատութեան մէջ իրանց անձը մատնումեն ամենատեսակ ծանրութիւնների։ Փարիզում ընդհակառակը նոքա մտածումեն ապագայի համար, — նոքա տղամարդերից օգուտ են քաղում։ Նոքա ունին իրանց հիւրանոցները. աշխարհավար կանայք (свѣтскія женщины) նորանով հետաքրքրվումեն, ըստ որում նորաձևութիւնը (мода) նոքա են հնարում։ Զափաւոր կուրտեզանկանները տնաւորվումեն, ձեռնոցների մագազին (վաճառատուն) են բաց անում, ամուսնանումեն. դոքա պատուաւոր ֆիգարոներն են (սիրահարական գործերի միջնորդ), բայց այնուամենայնիւ ֆիգարոներ։ Կատարելապէս նոյն յատկութիւններին դուք կըհանդիպէք և աշխարհավար կնոջ մէջ։ — Հիւր ընդունելու հմտութիւնը և նուրբ յաջողակ շողոքորդութիւնը աշխարհավար կնոջ բոլոր ոյժն են կազմում։ Ի հարկէ ո՞վ չի շողոքորթում։ Բայց յիմարը միայն կարող կըլինի ասել ձեզ. ա՜խ, ինչպիսի տաղանդ կայ ձեզանում; ա՜խ ինչպէս դուք լաւ էք։ Եթէ այսպէս բաներ ասումեն այնպիսի մէկ մարդու, որ բոլորովին խելագուրկ չէ, այն ժամանակ նա լռումէ, ամօթխածութեամբ աչքերը վայր է ձգում և իւր մտքում ձեզ դևի մօտն է ուղարկում։ Իսկ խելօք կինը երբէք չի ցոյց տալ ձեզ իւր հաւանութիւնը, նա այդ ծածկումէ, բայց այդ երևումէ։ Նա յարմարվումէ ձեր հայեցակէտին, ձեր մտքերը պարզումէ, կարո՛ղ է ստիպել ձեզ բացայայտ արտայայտելու, և դուք ինքներդ բաւական կըլինիք ձեզանից։ Նա վիճումէ ձեզ հետ, տալիս է ձեզ բաւականութիւն համոզելու նորան. նա երբէք միանգամից չի ստորագրվում և այսպէսով ապացուցանումէ, որ դուք հազուագիւտ խելքի տէր էք։ Խօսելով այդպիսի կնոջ հետ՝ դուք համոզվումէք, որ դուք սրամիտ էք, որ ձեր ճանապարհորդութիւնները (եթէ խօսքը դոցա մասին է լինում), — ամենահետաքրքիր բանն են աշխարհումը։ Նա միշտ օգուտ է քաղում ուրիշի թոյլ կողմից։ Ուրիշ կարգերի մէջ Կուրտիզանկան և գործակատար կինը գործումեն միևնոյն բանը։ Մէկ խօսքով երեք անձնաւորութեանց մէջն էլ խելք կայ։ Փարիզուհու բոլոր տաղանդն է օգուտ քաղել տղամարդկանցից՝ հաճոյանալով նոցա։

Այսպէս է մերձաւորապէս Փարիզուհու տիպը։ Այդ տիպը պատահումէ միակերպ հասարակութեան և բնակիչների ամէն դասակարգերի մէջ, ազնուապետական Սէն—Ժերմենի արուարձանից մինչև մշակների թաղերը։

(Թարգմ.) Գ. Տ. Զաքարեանց։

ՄՕՐ ԱՐՏԱՍՈՒՔԸ.

(Նեկրասովից).

Պատերազմի սարսափը երբ լսումեմ,
Երբ ամեն մի նորա նոր զոհն տեսնումեմ,
Ափսոսում չեմ բարեկամին կամ կնոջն,
Ափսոսում չեմ և ո՛չ նոյն ինքն հսկային . . .

Կինը շուտով մխիթարուիլ կարող է,
Եւ բարեկամն բարեկամին մոռանալ.
Բայց կայ մի սիրտ՝ որ սուրբ, ազնիւ անգին է,
Եւ կըյիշէ մինչ մտնելը գերեզման։

Մեր այս կեանքի կեղծաւոր, ցած գործերում՝
Իւրաքանչիւր գծուծ, անարգ արարքում
Կարողացայ այս աշխարհումս նըկատել
Մի միայն սուրբ, անկեղծ թափուած արցունքներ՝
Որ հոսումեն կարօտ մայրական աչքեր.
Նոքա մոռնալ իրանց որդւոց կարող չեն,
Որոնք ընկան պատերազմի դաշտերում
Ինչպէս ուռին վարսաւոր իւր ճիւղերուն
Թեքուած երբէք բարձրացընել չէ կարում։

Ակկերման. Թ. Պալեան.

ԱԶԳԱՅԻՆ

ԱԳՈՒԼԻՍԻ ՀԵՂԵՂԸ.

Լրագրները գուժեցին այն մեծ հարուածը, որին անցեալ Մայիսի 21-ին յետ ճաշու 5 ժամին ենթարկուեցին Ագուլիսի մեր ազգայինք: Ագուլիսը, պատմական Գողթնեաց գաւառի բարգաւաճ աւանը, որ իւր փարթամութեամբ շատ գաւառական քաղաքների նախանձը շարժումէր, իւր եկեղեցեաց պայծառութեամբ և հոգ. երկսեռ դպրոցների բարեկարգութեամբ օրինակելի էր, այսօր աղետալի տեսարան է ներկայացնում. 33 ից աւելի տներ կործանուել են, 41 մարդիկ զոհ են գնացել հեղեղին, իսկ հաւի ձուի խոշորութեամբ կարկտի տարափը գրեթէ ոչնչացրել է այգեստանեայքն ու արտորայքը, և շատ տներ էլ տղմով լցրել:

Յաւալի դրութիւնը ագուլեցու, ընդհանուր կարեկցութեան և մարդասիրութեան գութ է շարժում: Երևանի Պ. Նահանգապետը ամսոյս 2-ին շտապել է Ագուլիս առտեղեաւն հասու լինել ագուլեցւոյ աղէտքին և հարկաւոր հոգացողութիւնն անել: Նորին Գերազանցութիւնը նշանաւոր նուիրաբերութիւն անելուց յետոյ, առաջարկել է հասարակութեանը մասնաժողով կազմել դրսից եկած նուէրները ընդունելու և կարօտեալներին բաժանելու, խոստացել է միջնորդել կառավարութեան՝ օգնութեան հասցնելու անհրաժեշտութեան համար: Վնասը համարում են 500,000 աւելի որ շատ մեծ բան է 280 ծուխ ունեցող մի աւանի համար: Հեղեղից կործանուել են 33 տուն, տղմով լցուել են 31 տուն, հեղեղին զոհ են գնացել 41 հոգի, վիրաւորուած են 9 հոգի «փչացած, ամայացած են 150-ից աւելի այգիներ. ջրի հոսանքին զոհուել են հարիւրաւոր կովեր ոչխար և այլ չորքոտանիք. բոլոր աղբիւրները, որոնցով կենդանի են Ագուլեցիք և ոռոգվումեն այգիները՝ տղմով լցուել ցամաքել են. չորանումեն հեղեղից ազատուած այգիները և դաշտերը, և եթէ այդ աղբիւրները շուտով չը մաքրուին միլիոնների կը հասնի վնասը»:

Ահա թէ որպիսի բառերով է նկարագրուած Ագուլիսի աղէտը: Գթութիւն, գթութիւն և քրիստոնէական մարդասիրութիւն.

Ամենայն ոք իւր կարողութեան չափ տալով՝ մի պատուական և արժանաւոր ժողովուրդ կազատէ թշուառութիւնից և կործանումից։ Տուէք, և ագուլեցին կրկնապատիկը կը հատուցանէ երբ իւր թշուառութեան արտասուքը սրբուած կը լինի։

ՎԱՆԻՑ.

Խմբագրութենէն Արարատ ամսագրոյ.

—

Վերաշինութեան ժամանակի մէջ եմք.

Ցորմէ հետէ իւր հայրենասիրութիւնով ազգին հանրածանօթ եղող Ս. Հայրիկն Վանի առաջնորդութիւնը թողեց և քաղաքագիտական հմտութիւններով օժտեալ Գեր. Պօղոս Սրբազանն առաջնորդական կնճռալից պաշտօնը վարել սկսած է, մեր ուսումնարաններն զգալի առաջադիմութիւններ կընեն։ Ինչպէս Ս. Հայրիկի պաշտօնէութեան միջոցին, նոյնպէս այժմու աչալուրջ Առաջնորդի փութաջանութիւնով նորընտիր Գաւ. Ուս. յանձնաժողովն իւր ջանքերն առաջ կըտանէ։ Արդէն քանիմ՝ ամիսներ առաջ սոյն յանձնախումբն՝ ընդ. ուսումնարանների համար մեր Ուսուցչական խմբին խմբագրել տուաւ ծրագիր մը, որը յատկապէս իւր գնահատութեանն արժանացաւ։ Որպէս գիտեմ, յոյս կայ թէ ի մօտոյ պիտի յանձնուին իւրաքանչիւր ուսումնարաններին մէկ մէկ հատ՝ սոյն ծրագրին տպագիր օրինակներէն։

Մեր ուսումնարաններէն մեծ մասն՝ իրենց յառաջդիմասէր ուսուցիչներին ջանադրութիւնով արդի մեթոդին հետևած լինելով՝ տրամադիր են սոյն ծրագրին համեմատ սահմանեալ արդիւնքն արտադրել։ Պ. Յովնանեանի նոր բացած Մանկավարժական դըպրանոցն՝ լիայոյս կընէ զմեզ։ Սա իւր ուղղութիւնով հսկայական քայլեր կըխոստանայ, որի քաջալերութեան մասին կըյուսամք թէ պատուարժան խմբագրութիւնդ կըջանայ ռուսիաբնակ մանկավարժ Հայ խմբագիրներին հրաւիրել, որ իրենց թերթերէն մի մի օրինակ յղեն իւր Մանկավարժանոցին։ Նոյնպէս Արարքի Նորաշէնի, Պօղոսեան վարժարանի, որբանոցի և Պ. Բարազամեանի ուսումնարաններն մեծ յոյսեր կըտածեն։

Արարք եկեղեցին՝ որ իւր բազմամարդ տուներով մեր եկեղեցիներէն ամենէն հանրածանօթն է, շնորհիւ Գեր. Պօղոս Սրբազա-

նին՝ նորոգուելու և ընդլայնուելու հրամանն ստացաւ երէկ քաղաքապետութեան ատեանէն։ Գործողութիւններն արդէն սկսած էին։ Եկեղեցին քարուքանդ եղած էր ութ օր առաջ, և ժողովուրդ՝ բարեպաշտական եռանդով նորա փլատակին մէջ նոյն իսկ՝ առաքինական գործ մը կատարելու կը յաջողի։ Սոյն՝ եկեղեցիի վերանորոգութիւնն՝ եթէ թէ լինէր ընդ․ գործ մը․ վերաշինութիւնն՝ բոլոր Վանեցիներին համակրելի է։

Սրտեր կըմիանան, զգացումներն զիրար կըգիրկընդխառնեն։ Ամենուրեք միօրինակ խօսակցութեան նիւթ կըտեսնէք․ — Արարք եկեղեցիի վերանորոգութիւն, և Սրբազան Առաջնորդի փութաջան արիութիւնը։ Ամեն մարդ գոհ է այժմ իւր առաջնորդին արդարասիրութենէն։ Համակրական ցոյցեր՝ դէպի առաջնորդարանական վարչութիւնը հանրային կամ ժողովրդային է։ Ժողովուրդ և ազաները կըսիրեն միևնոյն տպաւորութիւններով Պօղոս Սրբազանն։ Ոչ ոք հակախրիմեան և հակապօղոսեան է․ և լրջմըտութիւնը կըթելադրէ մեզ սիրել թէ առաջինն և թէ վերջինն՝ իւրաքանչիւրն իւր տաղանդովն։

Աւելորդ չէ յիշել Պօղոս Սրբազանի ժրաջան գործունէութիւններն՝ իւր վարչական ազդեցութիւններուն ներքև։ Ամեն օր և ամեն րոպէ առաջնորդարանին սրահն լի է խուռն բողոքարկուներով, որոց մէջ կըգտնուին նաև թիւրք և քիւրտ՝ հակառակ իրենց հնապաշտական ամբարհաւաճութեան։ Անձամբ կըլսէ բողոքներն, կըլուծէ ամեն կնճիռ։ Իւր ազդեցութիւնն անբեկանելի է Գաւ․ իշխանութեան շրջանակի մէջ և ամենուրեք։ Ոչ ոք ձեռնունայն ետ չըդառնար։ Ժողովուրդ Գաւ․ իշխանութեան անխիղճ ճանկին մէջ մինչև ոսկորը փետտուելով, իհարկէ անհուն երախտագիտութիւն պէտք է սնուցանէ դէպի այս արդարադատ վարչութիւնն՝ որի առաջնորդող ղեկն կըվարէ Գեր․ Պօղոս Սրբազանն։

Գրասէր։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՀՈԳ․ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ․

Ստացանք Վաղարշապատի օրիորդական հոգ․ դպրոցի Խնամակալուհուց ի հրատարակութիւն սոյն տեղեկագիրը, որ խնամակալ Տիկինը ներկայացրել է հասարակական ժողովին։

Յարգելի Պարոնայք.

1882 Թուին ընտրուեցի դպրոցիս խնամակալ. մեծ պատիւ էր ինձ այդ, որ հասարակութիւնն արեց, և ես ո՛չ թէ իմ ուժերի՝ այլ հասարակութեան համակրութեանն ու օժանդակութեանն ապաւինելով ստանձնեցի ինձ առաջարկած պարտականութիւնը և ուրախ եմ, որ կարեացս չափ կարող եմ ծառայել այն հասարակութիւնը, որի մէջ բնակուելու բաղդն ունիմ։

Ամենայն նոր գործ սկզբում ո՛չ միայն դժուարութիւններ, այլև զոհողութիւններ է պահանջում. իմ ընտրուած օրից տասն տարի առաջ օրիորդական դպրոցը Վաղարշապատում նորութիւն էր և զոհողութիւն էր պահանջում բնականաբար, բայց տասն տարին սակաւ ժամանակ չէ։ Տասն տարուայ ընթացքում նորութիւնն արդէն հնացած է լինում կամ որպէս անհրաժեշտ մի բան մոռացութեան տրուելով և կամ եթէ յաջողվում է, արդէն ինքը գործը իւր միջոցներով ապահովուած է լինում։ Այս է պատճառը, որ մարդիկ սովորութիւն ունին տօնել տասնամեակներ։ Ես ինկատի ունենալով որ, եթէ օրիորդաց դպրոցը մի անհրաժեշտ բան լինէր Վաղարշապատում, կամ բնաւ գոյութիւն չէր ունենալ և կամ շուտով կփակուէր, բայց բարեբաղդաբար ո՛չ միայն պահել է իւր գոյութիւնը, այլև խոստանումէր ապագայում շարունակուել և պիտանի հանդիսանալ,—վստահացայ ստանձնել դպրոցիս խնամակալութեան ծանր պաշտօնը։

Իմ դէպի ժողովուրդն ունեցած յոյսը վստահութիւն տուեց ինձ բայց որչափ չըկամենայի ինձ խաբուած տեսնել իմ յոյսերի մէջ, Սակայն 124 ր. 38 կ. տոկոսաւոր պարտքը ծանրանումէր իմ վերայ։ Այդ պարտքի տակ ճնշուած մի տեսակ տատամսութեան մէջ էի, չէի վստահանում 188³/₄ ուսումնական շրջանին ձեռնամուխ լինել. սակայն խղճահարվումէի փակել դպրոցի դռները ուսման ծարաւի այն մի քանի աղջիկների առաջ, որոնք բաղխումէին դպրոցի դռները իրանց ուսման պապը զովացնելու համար։ Մինչ այս անորոշ դրութեան մէջ էի, մի քանի բարեսէր անձինք վստահութիւն և քաջալերութիւն տուին ինձ բանալ դպրոցիս դռները. վճռողական քայլ արի և դպրոցիս դռները բացի. նոքա, որոնք յուսադրել էին ինձ խօսքով, գործով ևս փութացին իրանց կարեաց չափ օգնել։ Յատուկ շնորհակալութիւն այդ բարեսէր անձանց։

Դպրոցը բանալիս հինգ ուսուցիչ արդէն պատրաստ ունէի, որոնք սկսեցին իրանց գործը, դոցանից միայն երկուքը ամսական պէտքէ ստանային, իսկ երեքը իրանց խոստման համաձայն ձրիաբար սկսեցին ուսուցանել։ Չըկայ բարեգործութիւն, որ չունենայ իւր արձագանքն ու հետևողը. ձրիաբար աշխատելու ցանկութիւն յայտնեցին և ուրիշները. այսպիսով ես ինձ ո՛չ միայն քաջալերուած, այլ և գործի յաջողութիւնը երաշխաւորուած դտայ։

Ասացի որ դպրոցիս ուսուցիչներից երկուսը միայն ամսական պէտք է ստանային, սակայն ի նկատի ունենալով դոցա ստացած ռոճկի քանակութիւնը, դոքա ևս գրեթէ ձրիաբար են աշխատել, որոնք են մեծապատիւ օրիորդներ

Սողոմէ Տէր Մարտիրոսեան շաբաթական 8 դաս, տարեկան 150 ր. և Մարիամ Աստուածատրեան վերակացութեան և ձեռագործի համար տարեկան 120 րուբլի. վերջինիս դպրոցի կողմից տրուած է բնակարան, վառելափայտ և ծառայ։

Ձրիաբար ուսուցին

Դպրոցիս բացման օրից Արժանապատիւ Յուսիկ Վարդապետ Մովսիսեան շաբաթական 2 դաս, Շնորհունակ Նիւբեմ Սարկ. Սուքիասեան շաբաթական 8 դաս և մեծապատիւ օրիորդ Շուշանիկ Շամքորեան շաբաթական 9 դաս։

Նոյեմբեր ամսից մեծ. օրիորդ Մարգարիտ Ստեփաննոսեան 10 դաս. և մեծ. Պ. Կարապետ Վարդանեան 5 դաս։

Տարւոյս Փետրուարից մեծ. օրիորդ Վարսենիկ Օհանջանեան 6 դաս։ Ձրիաբար տրուած դասերի գումարն է 40։

Դասերի այդ քանակութեան համար անհրաժեշտ հարկաւոր էին երկու ուսուցիչներ, որոնց ւիրաքանչիւրին եթէ վճարելու լինէինք առնուազն 300 րուբլի, դպրոցը 600 րուբլի ևս աւելի ծախք պիտի ունենար. ուրեմն ի շնորհս յիշեալ բարեսէր անձանց՝ դպրոցս խնայողութիւն է ունեցել 600 րուբլի. որի համար ես իբրև խնամակալ՝ ամսոյս 24 ին ուսուցչական վերջին ժողովում, երբ վերջանում էր $188^3/_4$ ուսումնական շրջանը յայտնեցի իմ լիուլի շնորհակալութիւնը։

$188^3/_4$ ուսումնական շրջանին դպրոցում գործել են 8 անձինք. այդ թիւը համեմատելով դպրոցիս դրութեան—այժ շատ է. սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ անհնարին էր աւելի պահանջել քան որ իրանք ձրիաբար ուսուցանողները կըկամենային, պարտաւորուեցի գոհ սրտով և շնորհակալութեամբ ընդունել նոցա առաջարկութիւնը, միայն որ՝ դպրոցում հարկաւոր առարկաները և դասերը բաց թողուած չըլինին։

Դպրոցում օրական եղել է 4 դաս. Ձեռագործի դասերը տրուել են ճաշից յետոյ։ Ուսուցանելի առարկաները եղել են — Ծխական դպրոցներին յատկացեալները.

Աշակերտները զետեղուած էին Ա. դասարանում 14՝ երկու բաժանմունքով. Պատրաստական դաս. 26՝ երեք բաժանմունքով։

Տարեկան քննութիւններն սկսուեցին Մայիսի 22 ին և վերջացան 24 ին, և ինչպէս կըվկայեն հանդիսականներից շատերը քննութեանց արդիւնքը ընդհանրապէս գոհացուցիչ էր, այնպէս որ Ա. դասարանի առաջնակարգ 8 աշակերտները եթէ շարունակելու լինին, պէտք է անցնեն Բ. դասարանի դասընթացք։ Պատրաստականից 5 աշակերտ փո-

խուեցին Ա. դասարան ստորին բաժանմունք. իսկ մնացեալները նոյն դասարանի մի բաժանմունքից միւսը փոխուելով՝ հարկ չեմ համարում այստեղ ճշտել:

Այսքան բաւական համարելով ուսումնական մասին, պարտք եմ համարում համառօտապէս մէջ բերել նաև դպրոցիս տնտեսական հաշիւը:

ՄՈՒՏՔ ԵՂԵԼ Է.

$188^2/_3$ *շրջանում*

	Ր.	Կ.
Ա. *Թատրոնից*	60	
Բ. *Աշակերտաց թոշակ*	300	
Գ. *Նուէրներ*	43	
Դ. *Վիճակախաղ*	157	
Ե. *Նախկին հոգաբարձութիւնից մնացորդ գումար*	13	$26^1/_2$
Զ. *Մանկական թատրոն*	40	
Է. *Տաղկեվանքի ուխտատեղից*	40	
Ը. *Պարտք*	150	
Թ. *Ի Տեղի տօնական այցելութեան*	9	
Գումար	812	$26^1/_2$

$188^3/_4$ *շրջանում.*

Թատրոնից	46	80
Աշակերտաց թոշակ	288	
Նուէրներ	113	
Ծօլկայից	30	
	477	80

ԾԱԽՔ Է ԵՂԵԼ.

	$188^2/_3$ *շրջանում.* Ր.	Կ.	$188^3/_4$ *շրջանում.* Ր.
Ա. *Վարժապետների ռոճիկ*	750		270
Բ. *Տառայի վարձ*	40		40
Գ. *Վառելափայտի*	52	50	30
Գ. *Ձեռագործի իրեղինաց*	62		34
Ե. *Նուէրներ ձրի ուսուցիչներին*	100		100
Զ. *Դպրոցի պարտքի և նորա տոկոսիքի հաշվում վճարած:*	20		
Է. *Վարձ հիւանի*	12		
Գումար	1036	50	474

$188^2/_3$ *թուի ծախքը մուտքից հանելով մնաց պարտք* 224 *ր.* $23^1/_2$ *կ:* $188^3/_4$ *թուի ծախքը մուտքից հանելով՝ մնաց պատրաստի դրամ* 3 *րուբլի* 80 *կ. որով և* $188^4/_5$ *տարեշրջանը սկսելիս դպրոցը պաժմէն*

224 ր. $23\,^{1}/_{2}$ կօպէկ պարտք ունի, նոյն ինքն դպրոցի շինութիւնը իւր քայքայուած դրութեամբ վերանորոգութեան մեծ կարօտութիւն ունի։

Այս հաշիւը ներկայացնելով Ձեր յարգութեանցը իբրև գործին տեղեակ ոք, յայտնում եմ՝ որ դպրոցը Սեպտեմբերին չէ կարող բացուել, եթէ հասարակութիւնը չըկամենայ լուրջ ուշադրութիւն դարձնել և, եթէ մեծի պահոցս մէջ հասարակական դաշնադրութեան համեմատ տուգանքի փողերը չըյատկացուին դպրոցին, որովհետև գուցէ դպրոցը չունենայ ձրի դասատուներ, իսկ վճարելու համար դպրոցի մուտքերն անբաւական են։

Խնամակալուհի Վաղարշապատու Օրիորդական Հոգ. Ծխակ. Դպրոցի

Ա. Օհանջանեան.

Ի 28 Մայիսի 1884 ամի.

Ամսոյս 17 ին Կիւրակէ օրը Ս. Պատարագից յետոյ Ճեմարանի՝ այս տարուայ ուսումնաւարտների խնդրանքով Հանգուցեալ Տ. Գէորգ Դ-ի գերեզմանի վերայ կատարուեց Հոգեհանգիստ և Հոգեհանգստեան ժամանակ կարդացուեց հետևեալ ճառը։

ՀՐԱԺԵՇՏ ՏԻՐՄԻՆ ԳԷՈՐԳԱՅ Դ-Ի

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Սովորութիւն է ազգաց ի նախնի ժամանակաց հետէ՝ պսակել յաղթական դափնեօք զճակատս դիւցազանց և քաջ պատերազմողաց ի վերայ հայրենեաց և հռչակել զնոսա յաշխարհախումբ հանդէսս դարուց ի դարս։

Բայց ըստ յառաջել ժամանակաց նուաղեցան յաչս աշխարհի փայլք դափնեաց գոռ մրցողաց ի դաշտ պատերազմի և ոչ ըստ արժանւոյն մեծարեալն ի հնումն մրցանակք վարողաց զբարոյական մարտ հայրենեաց նորս զգեցան փայլս։ Եւ այս ըստ ճշմարտութեան եթէ հոգի առաւել է քան զմարմին։ Ունել ունէր և մերս հայրենի աշխարհ զարս անուանիս յղկնեացդ, յորոց էր և Հայրապետս այս, որ արդ դնի ի հող գերեզմանի։

Գէորգ Դ. արիաբար մղեաց մարտ ընդդէմ խաւարին տգիտութեան, որ հարեալ բանակ յաշխարհի մերում հաստուցանէր անհնարին չարիս և ըստ արութեան բոլորեաց զգլխով իւր զդալարագեղ բրաբիոն, զոր խամրել չկարեն ո՛չ կիզիչ ճառագայթք արեգական և ոչ հողմունք խորշակաբերք և որ մնասցէ յարագուարճ զցայգ և զցերեկ, զամառն և զգարուն, զաշուն և ըզձմեռն։ Ապաքէն յայտ իսկ է, եթէ ազգի, որոյ տարագրեալ է ի հայրենի երկրէն, որոյ սպառեալ են գրեա թէ զօրութիւնք եթէ նիւթական և եթէ բարոյական, մնայ գլորիլ յանդունդս

կորստեան։ Ինքնաճանաչութիւն և վսեմ գաղափար ազգայնութեան միայն և եթ են արդարև՝ անաւիկ պատնէշք, որ միայն կարեն առաջս ունել զանդարձ կորստեան և ընդոստուցանել ի մահահանգոյն նիրհմանէ ի կեանս և ի կենդանութիւն։ Կարի քաջ խելամուտ եղեալ այսմիկ և առ ի զձեռամբ ածել զպատնէշդ և զդէմ ունել լուծիչ ախտից, Հայրապետս մեր ուստ աչօք ետես հնարս դարմանոյ ի կրթութեան և յուսման և եթ, որք հզօր են զարդիս զօրութեամբ քան զզէնս կռածոյս մարդախոշոշ մարտից։ Ձգտեցաւ Սա յայդ զօդ գիտութեան զսահեալս նժդեհութեամբ ի հայրենի երկրէ մերմէ կապել զեկեղեցւոյ և ըզհայրենեաց, արծարծել ի նոսա, եթէ են՝ են արդարև՝ և նոքա շառաւիղք հնադարեան ազգի միոյ, որ ունէր պարծանս ի հնումն և յաւելցի ևս ունել առ յապայն։ Սա ուղղեաց զտեսութիւն մտացն առաւել ի վիճակ մատաղ սերնդեան զորմէ կախի բախտ ազգի միոյ, առ որ վախճան քաջալէր եկաց հիմնել զնորանոր դպրոցս յոլով ուրեք. և ո՞ ոք այն որ անտեղեակ իցէ, եթէ քանի՜ բազմացան դպրոցք յազգիս եթէ օրիորդաց և եթէ մանկանց տղայոց առ Սովաւ։ Դպրոցքս այսոքիկ ևս առաւել բարձրանան յաչս հայորերոյ, հայեցեալ յայն, զի Հայրապետս մեր ուղղեաց զնոսա ընդ շաւիղս ազգային կրթութեան, որոյ աւարտ և պսակ համարեցի արդեօք Ճեմարանս, անեղծ անդրի, անմահ կոթող անուան լուսաւորիչ Հայրապետիս։

Հզօր բազկաւ իւրով և անընկճելի կամօքն խորտակեալ Սորա զամենայն խոչընդոտս հարթ հաւասար, կանգնեաց զՏաճարս զայս գիտութեան, ուր ժողովեալ ընդ քաղցր խնամովք իւրովք զհայ մանկտին ի հիւսիսոյ ասեմ և ի հարաւոյ յարևելից և յարևմտից զառաջինն հնչեցոյց յականջս նոցա զազգի ազգի բարձր մակացութիւնս ի հայ բարբառ և հայեցի կերպաւորեալ։

Շնչեաց ի նոսա զոգի միութեան և եղբայրութեան և կերպարանեաց ի Տաճարիս յայսմիկ զնուիրական գաղափար ընդհանուր միութեան Հայորերոյ վայրավատեցոյ ընդ ոլորտս աշխարհի, ընդ որոյ կատարումն խորհէր զցայգ և ցերեկ։

Թողեալ զայլն ամենայն, այս մեծագործութիւն Հայրապետիս շատ իսկ է յաւէժացուցանել զանուն Նորա ի սիրտս Հայկազանց...

Այլ եղո՜ւկ զի չկարեմք յետ ընդ ձիգս դեգերելոյ ի պէս պէս ուսմունս և ի հուն անդր ուսման ելանելոյ, բոլորել զաթոռով Հօր մերոյ և զսրտից մերոց զերմունս առաջի Նորա ծաւալել. այլ զցուրտ գերեզմանաւ շուրջ կամք այսօր և չվայելեմք ի լիաշուրթն օրհնութիւնս Ս. բերանոյ Նորա։

Սակայն և այնպէս ոչ անխնամ թողեալ մնացաք. այլ ուխտ Ս. Էջմիածնի ի նմին հոգի վառեալ չեթող մեզ ընդ երկար զգալ ցաւոյն զաւն կորստեան։

Հուսկ յետին ողջոյն է այս մեր՝ զոր ուղղեմք առ շիրիմ քո՝ ո՜վ

Սիրելեացդ ի մէնջ Հայր, և զհուսկ համբոյր մատուցեալ ցուրտ գերեզմանիդ խորասուզիմք յալիս ծովու կենաց մարդկայնոյ, առաջնորդ մեզ ունելով զբանս քո, որ իբր զաստղ լուսափիւռ բևեռոյ ուղղեսցէ զղեկ Նաւուց մերոց առ յարամուր և անխորտակ մնալ ի հարուածոց բուռն մրրկաց։

Յուշ ի կուրծ լիցին մեզ և անմոռաց ի կեանս մեր պատուիրանք քո, զոր հանապազ կրկնէին շրթունք վեհիդ ի տես որդեկաց քոց «եթէ լերուք հայ ի հոգի ճշմարիտ, վառեցարուք ի զէն քրիստոնէական հաւատոյս և ծառայեցէք Ազգիդ և եկեղեցւոյ»։ Օ՜ն, եկայք եղբարք, անկցուք ի ծունր զառաջեաւ շիրմիս և համբոյրս այս լիցի մեզ ի մըշտատև յարացոյց, եթէ անկորուստ մնասցեն ի սիրտս մեր բանք պատուէրի Հայրապետիս և յանլոյծ կապ զօդեսցեն զմեզ։

Ի դիմաց Նորաւարտ ուսանողաց

Առաքէլ Վարդանեան

1884 ամ. յ17 Յունիսի

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՀԱՅՈՑ ՆՈՂԱՅՍՔ ՔԱՂԱՔԻ

ԵՒ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆ.

Սակաւաթիւ գաղթական ժողովուրդք Հայոց ի 1812 ամի վերաբնակելով ի Նողայսք քաղաքի, ըստ ջերմեռանդութեան իւրեանց և Աստուածպաշտութեան կառուցեալ էին զտախտակեայ եկեղեցի, ի 1845 ամի ի խախտիլ այնորիկ՝ կառուցին զհողաշէն, և այս եկեղեցի ևս թէև քանիցս խախտեցաւ և նորոգեցաւ, բայց ի վերջնումն վտանգաւոր իսկ համարեցաւ, վասն այնորիկ բարեպաշտ ժողովուրդք ճիգն թափեցին և ըստ կարողութեան իւրեանց ի 1868 ամի ի նորոյ կառուցին զքարուկրեայ եկեղեցի, ի վերայ հիման քանդեալ եկեղեցւոյն։ Յանցանել 13 — 14 ամաց երևեցան յորմունս նոր եկեղեցւոյ ճեղքուածք, ապա ամ ըստ ամէ յաւելաւ և հիմնական խախտումն, յանցելումն 1882 ամի յուսահատութիւնն գեր ի վերոյ էր ժողովրդոց տեղւոյս, ըստ որում՝ յաճախել յեկեղեցին ըստ քրիստոնէական պարտաւորութեան իւրեանց՝ կասկածանս կրէին, իսկ օգնել վտանգաւորութեանն՝ բոլորովին անկարող էին, (որովհետև ըստ գծագրութեան քաջագէտ անձանց պէտս ունէր գէթ 1500 ր.)։ Այնու-

հետև Հասարակութիւն Հայոց քաղաքիս դարձոյց զուշադրութիւն իւր յօժանդակութիւն բարեպաշտ Ազգայնոց՝ որ ի Նոր-Նախիջևան, և նովին յուսով խնդրեաց ի Թեմական Գերապատիւ Մակար արքեպիսկոպոսէ պհրաման կամաւոր ժողովարարութեան։ Նորին Բարձր Սրբազնութիւն հայրական սիրով և գթարկութեամբ ի պէտս վերանորոգութեան եկեղեցւոյ մերոյ և ի մխիթարութիւն հոգևոր որդւոց իւրոց՝ հրաման արար մեզ, և մեք գնացաք ի նշանակեալ տեղին և սկիզբն արարաք ժողովարարութեանն. բարեպաշտ ժողովուրդք Նոր-Նախիջևանի ազգասիրական եռանդեամբ՝ որով յայտնի են նոքա Ազգիս՝ յօժարակամ սիրով ոչ խնայեցին զնուէրս իւրեանց, ստորագրութեամբ ի մատենին, գումարաւ 618 ր. արկանել ի գանձանակ եկեղեցւոյ մերոյ, և որովհետև ժամանակն ձմեռնամուտ էր՝ վասնորոյ ժողովարարութիւնն մեր մնաց կիսակատար, և այնպէս վերադարձաք, ի միջոցի 22 աւուրց, հասարակութիւն մեր լի ամենայն գոհութեամբ շնորհակալ և շնորհապարտ եկաց առ ամենայն նուիրատու քաղաքացիս Նոր-Նախիջևանի, զոր և հրապարակաւ յայտնէ բոլոր Ազգասէր ժողովրդոց հրատարակելով զանուանս նուիրատուացն։

Գրիգոր Սալթիկեան 15 ր. Յակոբ Խլըտճեան 50 ր. Յովհաննէս Փոփովեանց 5 ր. Գէորգ Խաթրանեանց 25 ր. Մարտիրոս Պաղտիկեան 25 ր. Մկրտիչ Մահտեսեան 25 ր. Սերովբէ Աճեմեանց 15 ր. Սարգիս Գիստեանց 15 ր. Միքայէլ Փոփովեան 25 ր. Նիկողայոս Աճեմեան 15 ր. Պօղոս Խռմաճեան 2 ր. Յովհաննէս Չայլախեան 5 ր. Յովակիմ Խաչեղեան 3 ր. Գաբրիէլ Մելքոնեան 10 ր. Եղբարք Ալաճալեան 10 ր. Սիմէօն Ալաճալեան 5 ր. Յովհաննէս քահանայ Աֆթանդիլեան 3 ր. Զհրոն Ալաճալեան 3 ր. Գեղեցիկ Օպերեան 2 ր. Գէորգ Գողպեթլիեան 10 ր. Կարապետ Կոժեվնիկեան 3 ր. Յակոբ Քայեալեան 3 ր. Աստուածատուր Պալիեան 10 ր. Ղուկաս Ղաբովալեան 5 ր. Կենթժօղլուեան և Ղարշնիկեան 10 ր. Պետրոս Խաղեղեան 6 ր. Միքայէլ Պեշտեան 3 ր. Սիմէօն Խաչեղեան 5 ր. Եղբարք Դուդիկեան 3 ր. Կարապետ Կոժեվնիկեան 10 ր. Գէորգ Խաթրանճեան 5 ր. Միքայէլ Ասմայեան 5 ր. Յարութիւն Սրմագէշեան 3 ր. Եղբարք Սրմագէշեան 10 ր. Թադէոս Եաղուբեան 3. ր. Մարկոս և Ակսենդ Միսսերեան 4. ր. Յովակիմ Մրզապարոնեան 3 ր. Աստուածատուր Չուկեան 4 ր. Մարգար Գագալնիցքեան 3 ր. Մելքոն Յովհաննիսեան 3 ր. Պետրոս Խախլաճեան 1 ր. Դաւիթ Տէր Մանուէլեան 10 ր. Գաբրիէլ Խայլաճեան 5 ր. Գէորգ Ալախանեան 10 ր. Յարութիւն Պաղտիկեան 5 ր. Բերսաբէ Նալպանդեան 5 ր. Կարապետ Խոդժայեան 10 ր. Խաչատուր Թիթրեան 10 ր. Միքայէլ Աւագեան 5 ր. Յովհաննէս

Սրմագէշեան 10 ր· Գասպար Սալըխեան 3 ր· Պաղդասար Պալեան 10 ր· Վարդերէս Ախճեան 10 ր· Յովհաննէս Զորայեան 1 ր· Յարութիւն Քավալեան 3 ր· Գրիգոր Բօնամարեան 5 ր· Գաբրիէլ Խուշեշեան 1 ր· Սարգիս Տօնիկեան 5 ր· Սերովբ Մորդածեան 3 ր· Յովհաննէս Նաշերեան 3 ր· Գաբրիէլ Քէքճեան 5 ր· Յովհաննէս Տէր Օվանեսեան 3 ր· Կարապետ Պախշաճեան 3 ր· Ղուկաս Միսսերեան 2 ր· այրի Գեղեցիկ Փափովեան 10 ր· Կարապետ Գագալնեցքեան 5 ր· Սարգիս Խոճեան 5 ր· Միքայէլ Զարըխեան 3 ր· Կարապետ Զախըրեան 15 ր· Ասվատուր Ասվատուրեան 3 ր· Գաբրիէլ Ասմայեան 3 ր· Քերոբ Չերնիշեան 5ր· Ասվատուր Խնդեմիրեան 3 ր· Վարդուհի Պետրոսեան 10 ր· Մինաս Պետրոսեան 15 ր· Թէոդորոս Ոսկերչեան 2 ր· Աւետիք Թեպրաքեան 3 ր· Խաչատուր Չայլախեան 5 ր· Մկրտիչ Չերնովեան 3 ր· Ստեփաննոս Կելեշեան 1· ր· Խաչատուր Ախճեան 1 ր· Սերովբէ Բէշէքերեան 3 ր· Դանիէլ Նալպանճեան 3 ր· Եղիա Չապրաստեան 2 ր· Գէորգ Խաշեշեան 1 ր· Մկրտիչ Արխատելեան 2 ր· Ստեփաննոս Զորչոփեան 1 ր· Պետրոս Պոստանճեան 2 ր· Եղիազար Կորօղլեան 5 ր· Յովակիմ Քալմեկեան 10 ր· Կարապետ Թիւլպէնճեան 5 ր· Գէորգ Թիւլպէնճեան 3 ր· Մարիամ Թիւլպէնճեան 3 ր· Պետրոս Զուպուխճեան 2 ր· Գրիգոր Թիւլպէնճեան 3 ր· Կարապետ Թաշչեան 5 ր· Թաթել Թաթելեան 2 ր· Գրիգոր Յովհաննէսեան 5 ր· Աննա Մաղտեսեան 1 ր· Գէորգ Աշաջանեան 1 ր·

(Շարունակելի)

Ժողովարարք { Ղազարոս քահանայ Ցակոբեանց
Երեսփոխան կարապետ Սուրխմէզեան }

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ·

Ամսոյս 10ին Կաթուղիկէ Ս. Էջմիածնի տօնը վայելուչ հանդիսով տօնուեցաւ Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութիւնից յետոյ, Ս. Պատարագից առաջ, 9 ժամին ժողովրդեան խուռն բազմութեամբ Մայր Աթոռոյս զանգակատան առաջ, արեւմտեան մեծ դրան հանդէպ կատարուեց յատկացեալ մաղթանքը· Ս. Պատարագից յետոյ Վաղարշապատու հասարակութեան առաջաւոր անձինք և զանազան դիւանատանց աստիճանաւորները միաբանութեանս հետ ճաշեցին Մայր Աթոռոյս սեղանատանը·

Ամենապատիւ Տեղակալ Տ· Մակար Սրբազան Արքեպիսկոպոս տկարութեան պատճառով, բժշկի խորհրդով ամսոյս 14ին առաւօտեան 7 ժամին ուղեւորեց դէպի իւր վիճակը կազդուրուելու համար, որով և մինչև ցվերադարձ նորին Ամենապատիւ Սրբազնութեան՝ ըստ օրինի, իբրև

աւագագոյն Սինօդի անդամոց՝ Սինօդի Ատենապետի Տեղակալի պաշտօնը պէտք է վարէ Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոս։

—

Վաղարշապատի օրինորդական Հոգ. դպրոցի Խնամակալուհին ուղարկելով խմբագրութեանս հետեւեալ նուիրատուաց ցուցակը, խորին շնորհակալութիւն է յայտնում նուիրատուացն, որք են.

	Ր.
Թադէոս Եպիսկոպոս Կառավարիչ Շամախու Հայոց թեմի .	10
Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանց .	10
Ատենադպ. Կոնսիստ. Ղարաբաղու Իսակ Լազարեան	3
Սուքիաս Եպիսկոպոս .	25
Յովհաննէս Գրիգորեան Սարգսեանց .	10
Ուսումնասէր ոմն .	2
Ոմն յազգայնոց .	3
Համազասպ Վարդապետ	5
Սոնա և Մարիամ Համազասպեանց	2
Սեդրակ Մանդինեանց ի յիշատակ վաղամեռիկ միամեայ Աւետիս որդւոյ իւրոյ	25
Ստեփաննոս Տէր Ստեփաննոսեան	1
Խորէն Ծ. Վարդապետ Ստեփանէ	3
Յովհաննէս Վարդապետ Շիրակունի	5
Յարութիւն Մխիթարեան .	5
Ես	4
Գումար	113

Աստուած ի հաճոյս իւր ընդունէ և վարձատրէ նուիրատուաց ստո և ի հանդերձելումն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

—

Պ. Սեդրակ Մանդինեան ի յիշատակ միամեայ վաղամեռիկ որդւոյ իւրոյ Աւետսի նուիրած լինելով Վաղարշապատի երկսեռ դպրոցներին իւրաքանչիւրին 25ական րուբլի, Տղայոց դպրոցի Հոգաբարձութիւնն ու Օրիորդաց դպրոցի Տիկին Խնամակալը յայտնումեն խորին շնորհակալութիւն, աղօթելով՝ որ Հոգին Սուրբ մխիթարէ վշտադնեալ ծնողաց սրտերը։

—

Վանից Պ. Գրասէրը ի միջի այլոց գրումէ. «Այս օրերս Անգ. հիւպատոս Պ. Էյրս հեռացաւ քանի մ' ամիս արձակուրդով Անգղիա ուղևորելու համար։ Քանի մ՝ օր ետք Ռուսիոյ դեր հիւպատոս Պ. Կամսարական մեր մէջ լինել կը յուսամք»։

—

Կ. Պօլսում հրատարակուող «Բուրաստան Մանկանց» մանկավարժական թերթի հետ ստացանք այս տարի Զմիւռնիայում տպուած «Տեղեկագիր յանձնաժողովոյ վերաշինութեան ազգային Ս. Հռիփսիմեան վարժարանին Զմիւռնիոյ առ պատկառելի երեսփոխանական ժողով գաւառիս» վերնագրով տետրակը։ Ելից և մտից ընդհանուր հաշուեկշռից երևումէ որ շինութեան մուտքն ու ծախքը եղել է լիրա 3869, ղրշ. 14, որից 569 լիր 8 ղրշ. պարտք։

—

Ծամանակաւոր ընդհատումից յետոյ սկսուեց հրատարակուել Զմիւռնիայում Արշալոյս Արարատեան լրագիրը և ստացանք արդէն մի քանի համարները։ Լրագրի բաժանորդագինն է Տաճկաստանից դուրս 25 ֆր. Հասցէն Զմիւռնիա, Սէլվի խան թիւ 17։

—

Ստացանք Մանկավարժանոց ամսագիր № 3, Առողջապահական թերթ № № 4 և 5 մի տետրակի մէջ ամփոփած, Կ. Պօլսում հրատարակուող Բուրաստան Մանկանց մանկավարժական հանդէսի հատոր Գ. տետր 10. և Աղբիւր № № 5 և 6 մի տետրակով։

—

Մանկավարժանոցի Խմբագիրը ստացած լինելով Մխիթար Գօշի դատաստանագիրք Հայոց Հանգուցեալ Վահան Ծ. վարդապետ Բաստամեանի, իւր թերթի 3 համարում գրումէ «Հանգուցեալ վարդապետի այս երկասիրութիւնը հարուստ ընծայէ հայ օրէնսգէտներին և հայ ազգատ իրաւագիտական գրականութեանը։ Տպված է Էջմիածնի տպարանում, գինը 3 ման. է նշանակուած, շատ թանկ»։

Ամենայն հրատարակող այն հաշիւը պէտք է ունենայ ի նկատի, որ եթէ տպագրուած գիրքը վաստակ չըբերէ, գոնէ վնասի ևս չենթարկէ իրան, թողնենք որ յիշեալ գիրքը իւր ծաւալով և տպագրութեան դժուարութեամբ արժանի էր 3 րուբլու։ Գիրքը լինելով մասնագիտական մի գործ՝ մասնագէտներին միայն կարող է հետաքրքրել և ուրեմն և մասնագէտներն մեծ մասամբ պէտք է գնեն, իսկ այդպիսեաց թիւը մեր մէջ շատ չէ, հետևաբար մնումէր այնպիսի գին նշանակել, որ ծախուածի գինը կարող լինէր ծածկել գոնէ տպագրութեան ծախքը։ Տեսնենք ծախուածը այն քանակութեան կըհասնի՞ որ ծածկէ ծախքը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ՍԻՆՕԴԻ ՄԱՅԻՍԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ.

ՎԱՐՉԱԿԱՆՔ

2-ն Մայիսի· Սինօդը ի նկատի ունենալով Աստրախանի կոնսիստորիայի տարւոյս Մարտի 26 ին № 492 յայտարարութիւնը, Ղզլարու Աստուածամօր աւագ եկեղեցու դպիր Մովսէս Առաքելեան Թումայեանցին, կնոջ մահուան պատճառով նորա խնդրի համեմատ, արձակեց հոգեւորական կոչումից պարտաւորելով օրինաց 9 րդ հատոր 490 յօդուածի համեմատ կենցաղավարութեան այլ եղանակ ընտրել·

—

2-ն Մայիսի· Սինօդը ի նկատի ունելով Ա. Թիֆլիզու կոնսիստորիայի № 873 տարւոյս Մարտի 21-ի յայտարարութիւնը, որի հետ ուղարկելով Դուշէթեցի այրի Մարիամ Աւետսեան Ալլահվերտեանի կտակի քաղուածքը, յայտնումէ որ յիշեալ այրին Վլադիկավկազում եղած իւր երկու փայտաշէն տները բոլոր շինածներով և գետնով կտակել է Վլադիկավկազու Հայոց եկեղեցուն այն պայմանով՝ որ եկամուտից նորոգութեանց ծախքը հանելուց յետոյ $^2/_3$ը յատկանայ Վլադիկավկազի և Դուշէթի երկսեռ դպրոցներին իսկ $^1/_3$ մասը Ս. Էջմիածնին. Բ. Վլադիկավկազու Նահանգական դատարանի պրօկուրօրի № 1085 տարւոյս Փետր. 28-ին գրութիւնը նոյն կտակի քաղուածքով, և Գ. Վլադիկաւկազու եկեղեցու գործակալ Մինաս քահանայ Միրանեանցի № 10 տարւոյս Ապրելի 7-ին յայտարարութիւնը,—որոշեց այս մասին եղած գրութիւնները գործի հետ կցել և կտակը կատարել ըստ ցանկութեան կտակարարի·

—

4-ն Մայիսի· Բարձրագոյն կամօք Ախալցխայի յաջորդ Արժ. Մամբրէ վարդապետ Սանասարեանը նշանակուած լինելով Սինօդի անդամ, և տարւոյս Ապրելի 18-ին № 927 հրամանագրով Սինօդից յայտնուած լինելով Նորին Արժանապատուութեան, Մայր Աթոռս ժամանելուց յետոյ Մայիսի 4-ից սկսեց վարել իւր պաշտօնը·

—

21-ն Մայիսի· Սինօդը ի նկատի ունելով Նոր—Բայազէդու գործակալ Արժ. Բարդուղիմէոս վարդապետի յանուն Տեղակալի Ատենապետի Սինօդի տարւոյս Մարտի 31 ին մատուցած և Նորին Սրբազնութիւնից Սինօդին ի տնօրէնութիւն յանձնած հրաժարականը՝—որոշեց Ղազարշապատայ կեդրոնատեղւոյ գործակալ Արժ. Պետրոս վարդապետ Այվազեանին կարգել Նոր Բայազէդու գործակալ, իսկ Արժ. Բարդուղիմէոս վարդապետին՝ Ղազարշապատու։

—

25-ն Մայիսի· Սինօդը ի նկատի ունելով Թիֆլիսի Կոնսիստորիայի №

1369 յ9 Մայիսի տարւոյս յայտարարութիւնը Ախալցխաքնակ Հինդ ամաց հետէ անյայտացած Մկրտիչ Ասլանեանցին որոնելու համար, և նոյն Կոնսիստորիայի 1349 Մայիսի 9 ին յայտարարութիւնը 1881 Թուից հետէ անյայտացած Միքայէլ Յովհաննիսեան Պօղոսեանց Աւալեանովի անյայտանալու համար,—որոշեց գրել բոլոր Կոնսիստորեաներին և նոցա միջոցաւ Հոգևոր Կառավարութեանց, Ատրպատականի ու Պարսկաստանի Առաջնորդներին և Կ. Պօլսոյ Պատրիարքին որոնել տալ և եթէ յաջողի գտնել՝ ուղարկել յիշեալ անձանցը իրանց ընտանեացը խնամարկելու։ Անյայտացած Մկրտիչ Ասլանեանցը մահմետականութիւնից Հայոց դաւանութիւն ընդունած 40 ամեայ բարձրահասակ ու առողջակազմ մարդ է, իսկ Միքայէլ Յովհաննիսեան Աւալեանովը ծնուած է Գանձակ քաղաքում և վաղուց փոխադրուած լինելով Թիֆլիս՝ համարվումէ Թիֆլիզու քաղաքացի և է միջակ հասակով և քառասուն ու հինգամեայ, ձախ երեսի վերայ ունի կտրուածի նշան, աջ ձեռքի միջի մատը անշարժելի ուղղոյ. մասամբ կորաքամակ, գլուխը ճաղատ. բաց ի հայերէնից գիտէ Անգղիերէն, Տաճկերէն և մասամբ էլ Ռուսերէն։

—

30 ն Մայիսի. Սինօդը ի նկատի ունելով Կարս և Բաթում նահանգների Առաջնորդ Գեր. Գրիգորիս եպիսկոպոսի երկու յայտարարութիւնները ի 12 ն Նոյեմբերի 1882 ամի և յ2 ն Փետրվարի տարւոյս, որոնցով Նորին Գերապատուութիւնը յայտնելով իւր վիճակի արդեանց սակաւութիւնը՝ խնդրումէր Արևմտեան Շիրակի երեսուն չորս գիւղերը յանձնել իրան կամ աւելացնել ռոճիկը ուրիշ արդիւնքներից, և Արևմտեան Շիրակի (Հոռոմոսի) գործակալութեան գործակից Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցի երկու յայտարարութիւնները, որոնցով ըստ ինչ ինչ հանգամանաց խնդրումէր հրաժարուել, որոշեց Հոռոմոսի գործակալութիւնը (Արևմտեան Շիրակը) յանձնել Ղարսայ Առաջնորդին և Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանին ազատ համարել։

—

11-ն Յունիսի. ի նկատի ունելով Ատենապետի Տեղակալ Տ. Մակար Սրբազան Արքեպիսկոպոսի առաջադրութիւնը № 85 ի 11-ն սոյն Յունիսի, որով իւր վերահաս տկարութեան համար խնդրումէ անցագիր Ռուսաստանի ջերմուկները գնալու ի գիւտ առողջութեան՝ Սինօդը որոշեց տալ անցագիր Տ. Մակար Արքեպիսկոպոսի, և Ատենապետի տեղակալի պաշտօնը յանձնել անդամներից երիցագոյն՝ Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոսին, հաղորդելով միանգամայն Ռուսաստանի կոնսիստորիաներին, Ատրպատականի ու Պարսկաստանի առաջնորդութեանց և Թիֆլիզու Գլխաւոր Կառավարութեան։

ԴՊՐՈՑԱԿԱՆՔ.

16-ն Մայիսի. Սինօդը ի նկատի ունելով Երևանայ Թեմակալի փոխանորդ Գեր. Գէորգ Եպիսկոպոսի № 10 տարւոյս Մարտի 15 ին յայտա-

բարութիւնը Երեւանայ քաղաքամասն Նորգի երկսեռ դպրոցների համար ընտրուած նոր հոգաբարձուներին հաստատեց իրանց պաշտօնում— որոնք են՝ Գ. Գ. Աստուածատուր Խանազեանց, Աւետիս Տէր Աւետիքեանց, Աւետիս Սագինեանց Թամրազ և Ազարիա Ազարեանց։

—

16-ն Մայիսի. Սինօդը ի նկատի ունենալով Աստրախանու վիճակի կառավարիչ Գեր. Սուքիաս եպիսկոպոսի № 124 ի 11 ն Մայիսի տարւոյս յայտարարութիւնը, որ վասն հոգաբարձուաց Աստրախանայ դպրոցի, վերահաստատեց իրանց պաշտօնի մէջ ընտրեալ հոգաբարձուներին, որք են. Մկրտիչ Լեոն—Խանեան, Մկրտիչ Բուրջալեան, Սիմէօն Պօպովեան, Բենիամին Մելիքեանց, Ստեփաննոս Սերեբրակեանց և Յովհաննէս Սարգսեան։

—

16-ն Մայիսի. Սինօդը ի նկատի ունենալով Երեւանայ և Կարուց թեմերի թեմական տեսչի պաշտօնակատարի № 72 ի 23 ն Մարտի տարւոյս յայտարարութիւնը և ընտրողական թերթը, հաստատեց Օշականայ Մեսրոպեան դպրոցի հոգաբարձութեան պաշտօնում հետեւեալ անձինքը, որոնք են. Եսայի աւագ քահանայ Ամատունի, Մարգար Իսրայէլեան Աւագեանց և Խաչատուր Յարութիւնեան։

—

18-ն Մայիսի. Սինօդը ի նկատի ունենալով Երեւանայ և Կարուց թեմերի թեմական տեսչի պաշտօնակատարի № 73 տարւոյս Մարտի 23 ին յայտարարութիւնն և ընտրողական թերթը, Քանաքեռի Հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան պաշտօնում հաստատեց հետեւեալ անձինքը, որոնք են. Յարութիւն Հապուլեան, Սողոմոն Յակովբեան և Կոստանդին Մովսիսեան։

—

21-ն Մայիսի. Սինօդը ի նկատի ունենալով Կովկասու ուսումնական շրջանի Հոգաբարձուի դիւանատան № 1544 տարւոյս Մարտի 9 ին գրութիւնը արքունի դպրոցների հայ աշակերտաց համար ուսումնարանական արձակուրդի տօների մասին—Սինօդը Հայ աշակերտների համար արձակուրդի տօն համարեց Ա. Յունվարի 5, 6, 7 և 13՝ Յիսուսի Քրիստոսի ծննդեան մկրտութեան և անուանակոչութեան տօները, Բ. Փետրվարի 14 ին Յիսուսի Քառասնօրեայ Գալստեան տօնը, Գ. Ս. Վարդանանց զօրավարաց տօնը, Դ. Ապրելի 7-ին Ս. Աստուածածնի Աւետման տօնը. Ե. Ս. Գրիգոր Լուսաւորչի Վիրապ մտնելու և Ե. Վիրապից դուրս ելնելու տօները, Է. Ս. Լուսաւորչի Գիւտի նշխարաց տօնը, Ը. Ս. Սահակ և Մեսրոպ Թարգմանիչների տօնը, Թ. Ս. Թադէոս առաքեալի և Սանդուխտ կուսի տօնը, Ժ. Նախկին Լուսաւորչացն Հայաստանեայց Թադէոսի և Բարդուղիմէոսի Սրբազան առաքելոց տօնը, ԺԱ. Սեպտեմբերի 8-ին տօն Ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ, ԺԲ. Նոյեմբերի 21-ին տօն Ընծայման Ս. Աստուածածնի ի Տաճարն, և ԺԳ. Դեկտեմբերի 9 ին տօն Յղութեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ։

Անդամ Սինօդի ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Սուննեաց վիճակի Դարաբաս գիւղացի, ի հասակի 42 ամաց ամսոյս 17-ին յետ կէս աւուր հանգեաւ ի Տէր իւր հայրենիքում, երկար ժամանակ տառապելով թոքախտութեամբ։

Հանդուցեալը 1857 թուին մտել է ի կուսակրօն հոգևորականութիւն Ս. Էջմիածնի վանքը։

1865 թ. Յունիսի 21 ին ստացել է սարկաւագութիւն. 1867 թ. Մարտի 20 ին ձեռնադրուել է Աբեղայ. 1868 թ. Նշանակուել է Երևանայ Հայոց Կոնսիստորիայի անդամ. 1869 թ. Օգոստոսի 15-ին նշանակուել է քննիչ Հին Նախիջևանի Հոգ. կառավարութեան գործոց. 1870 թ. 10 Սեպտմ. ուսուցիչ Երևանայ Հայոց թեմական դպրանոցի. 1872 թ. տեսուչ նոյն դպրոցի. 1873 թ. Օգոստ. 3 արձակուելով յիշեալ պաշտօններից՝ կարգուել է անդամ Սինօդի.

1873 թ. Յունվարի 20 կարգուեց ծախսարար Ս. Էջմիածնի և նոյն թուի Սեպտեմ. 20-ին անդամ վանքական կառավարութեան. որպիսի պաշտօնները վարեց ց8-ն Յունվարի 1875 թ. Սինօդի անդամութեան հետ.

1874 Դեկտմ. 2-ին ստանձնեց հսկողութիւն Սինօդի դիւանական գործավարութեան վերայ. Նոյն թուին Մարտի 25 ին կարգադրութեամբ Սինօդի գնաց Տաթևու վանքը վանքի անշարժ կալուածներն ու գիւղօրայքը կապալաւ տալու.

1876 թ. Յունուարի 20-ից ց3 ն Մարտի Գանձապահի բացակայութեան համար վարել է Մայր Աթոռոյս գանձապահի պաշտօնը.

1876 թ Մարտի 26 գնաց Թիֆլիս, տեղւոյն հայոց կոնսիստորիայի հին անդամները փոխելու և նորերը կարգելու, նոյնպէս և

նոյն կոնսիստորիայի հաշիւներն ու հին գործերը քննելու, և Թիֆլիզու ու Ախալքալաքի վանքապատկան ու եկեղեցական անշարժ կայքերը կապալաւ տալու.

1878 Թ. Մայիսի 20 ստացաւ չորրորդ աստիճան վարդապետական մասնաւոր իշխանութեան.

1879 Թ. Յունվարի 9-ին նշանակուեց նախագահ վանքական կառավարութեան Մայր Աթոռոյս, նոյն Թ. Մայիսի 27 ձեռնադրուեց Եպիսկոպոս և Յուլիսի 18-ին գնաց Թիֆլիզ Մայր Աթոռոյս կալուածները կապալաւ տալու։

Իւր պաշտօնավարութեանց ժամանակ 1871 Թուին Մայիսի 10ին վարձատրուել է վարդապետական ականակուռ լանջական խաչով. 1873 Թ. Յունիսի 25-ին ստացել է Հանգուցեալ Տէր Գէորգ Դ. Կաթուղիկոսից շնորհակալութեան կոնդակ. 1874 Թ. Նոյեմբերի 10-ին վարձատրուել է ծաղկեայ փիլոնով.

Հանգուցեալը 1880 Թուի Դեկտեմբեր ամսին արձակուելով վանքական կառավարութեան նախագահութեան պաշտօնից մինչև իւր մահը ունէր Սինոդի անդամութեան պաշտօնը.

Միաբանութիւնս խորին ցաւակցութեամբ ընդունեց հանգուցելոյ մահուան գոյժը և աղօթում է առ Աստուած լուսաւորել հոգին և իւր սուրբերի ու սիրելիների հետ դասել երկնից արքայութեան մէջ.

ՆԵՐԿԱՅ 18$^{83}/_{84}$ Թ. (ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

„ՎԱՐԺԱՐԱՆ“

Մանկավարժական ամսագիրը կը հրատարակուի Թիֆլիզում նոյն գիրքով, նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների գործակցութեամբ։

Մեր ամսագրին գործակցում են ազգային ուսումնարանների մէջ գործող յայտնի անձինք, որ ծանօթ են հայ հասարակութեանն իրանց աշխատութիւններով մանկավարժական ասպարիզում։

«ՎԱՐԺԱՐԱՆԸ» *հրատարակւում է ամիսը մի անգամ, բացի յունիս և յուլիս ամիսներից։ «Վարժարանի» տարեկան բաժանորդագինն է* ՀԻՆԳ *ռուբլի* ԿԱՆԽԻԿ։

Տարին սկսվում է օգոստոսին և վերջանում մայիսին, տարին հրատարակելով տասը տետրակ։

Թիֆլիզում ստորագրուել կարելի է խմբագրատանը և պ. Ե. *Տատուրեանի լամպային մագազինում։ Օտարաքաղաքացիք դիմումն խմբագրութեան հետևեալ հասցէով* Въ Тифлисъ, въ Редакцію педагогическаго журнала «Варжаранъ» Абасъ-Абатская площадь, домъ № 8) Секретарю Редакціи Григорію Шах-Будагянцу: *Իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase), Rédaction du journal pédagogique „Varjaran“. Կ. *Պօլսում կարելի է ստորագրուիլ* «ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ» *հանդէսի խմբագրատանը (Սուլթան-Համամ. Չօճա խան փողոց, թիւ* 14.)

Խմբագիր—Հրատարակող՝ Ն. *Խոսրովեանց*

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի ՕՐԱՑՈՅՑ 1885 *ամի գինը ամենայն տեղ* 20 *կոպ.*

Մամուլի տակից դուրս եկաւ

ՄԽԻԹԱՐԱՅ ԳՕՇԻ

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

ԻՐԱԽԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ ՀԱՆԴԵՐՁ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ

ՎԱՀԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ

ՄԻԱԲԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԱՆԱՀՕՐ
Ս. ԳԱՅԻԱՆԵԱՅ ՎԱՆՈՒՑ

Գիրքը բաղկացած է 634 երեսից մեծադիր քառածալ թերթով, որից 180 երեսը միայն հետազօտողի յառաջաբանն է. գինն է 3 ռ.-բլ.։

Մայր Աթոռոյս Տպարանի գրատան գրքերը վաճառվումեն գումարով առնողներին 20% զիջումով։ Գնել ցանկացող գրավաճառներին, դպրոցների հոգաբարձուներին և այլոց կուղարկուի գրքերի ցուցակը՝ երբ նոքա դիմեն Տպարանական ժողովին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ամենապատիւ Սրբազան Տեղակալի Հրամանով առաջիկայ 1884-85 ուսումնական տարուայ սկզբին Գէորգեան ճեմարանի վեցերորդ դասատան և առաջին լսարանի մէջ կընդունուին տաս տաս գիշերօթիկ աշակերտներ. իսկ միւս դասարաններում իսպառ ընդունելութիւն չի լինի։

Այս մասին պատիւ ունիմ յայտնելու բոլոր խնդրատուներին Արարատ ամսագրի և միւս լրագրաց միջոցով։

Տեսուչ ճեմարանի ԱՐՇԱԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ.